№ 12 (178) XVI ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՅԱՐԻԶՄԸ ՅԱՐԻ ԴԷՄ

Ուռչում, գալարւում է նա, ինչպէս փոթորկւած ալիք. մռնչում, սպառնում է նա, որպէս վիրաւոր գազան։—Սանձահարւած մի դնչակալով, որ հոկտեմբերեան մանիֆեստ անունն է կրում, նա, նահանջի ենթակայ ցարիզմը, փորձում է յետ գրաւել կորցրած դիրքերը, ճիգ է անում խորտակել ըմբոստացած յեղափոխութիւնը, ահաբեր թշնամին մեծանուն միապետութեան։

Օրւայ նշանակն է այդ։

Երկու տարի առաջ, երբ համբերատար, դառնութեան բաժակը մինչև յետին կաթիլը քամած դիմադրութիւնը ջղաձգաբար գլուխ բարձրացրեց, և երբ վտանգի հողմը փչեց Ձմեռային պալատի շուրջը, սպառնալով քանդել ու գլորել և՛ թագ, և գայիսան, և՛ գահ,—ցարը, օգոստափառ տզրուկների օծւած ներկայացուցիչը՝ յետ նահանջեց, պառակտւեց այն վիթխարի հրէշից, որ ցարիզմ անունն է կրում, և փորձեց փրկել իրեն և իւրայիններին՝ հանգստացուցիչ խոստումներով։ Աղերսագին ու խաբեբայական դիմումն արեց օրւայ հերոսին—յեղափոխական Ռուսաստանին, և արքայական մանիֆեստով երդւեց վայր դնել միապետութեան „մտրակը", բաց անել ժողովրդի առջև փակւած դարպասը և ճանաչել 150 միլիոն հպատակների իրաւունքն ու պահանջները։

Ցարը՝ ցարիզմի դէմ։

Սակայն ցարիզմը—այդ դարեւոր դաշնակցութիւնը՝ յետաշարժ ոյժերի, նա որ ծնող-մայրն է հարստահարութեան և բռնութեան, ստեղծագործողը վրէժի և ստրկացումի, առ ժամանակ լքւած և յուսահատ,—դարան մտաւ, հաւաքեց իր ցիրուցան ոյժերը, դիտեց թշնամուն, և ահա մի քանի ամսից ի վեր՝ հրապարակ է եկել իբրև առաջապահ մարտիկ ոյժ, և օրհասական կռիւ է մղում՝ յետ գրաւելու „կորցրած թագն ու գահը", տիրանալու նախկին փառքին ու մեծութեան։

Բոլոր միջոցները ներելի են նրան, այդ վիրաւոր գազանին.—խուլիգանացումն ամբողջ խաւերի, ոչնչացումն օրէնքի և օրէնսդրութեան՝ սրբագործած նոյնիսկ իր ձեռքով, դաւ պետութեան դէմ, դիմումն օտար միջամտութեան, հալածանք ամբողջ ժողովրդի դէմ։ Նա է, այդ „կարգապահ" ցարիզմը, որ թքում է ցարի երեսին, ոտի տակ տալիս նրա մանիֆեստը, արձակում „բարձրագոյն" հրաւիրւած դուման, և ստիպում գահակալ Վիժւածքին՝ վաւերացնել անօրինակ ակտեր, որոնց նմանը աշխարհը չէ տեսել, կատարել բռնութիւններ, որոնցից քարերն են կարմրում...

Ցարիզմը՝ ցարի դէմ։

Այսօրւայ գործելակերպն է այս, որի աջողութեան համար, բարձրագիր ոճրագործների լեգէօնը մի օր սպառնում է յանուն զօրքի, մի ուրիշ օր յանուն „իսկական ռուս մարդոց". մի տեղ յանուն „պետութեան ամբողջութեան", մի այլ տեղ յանուն „կարգապահութեան"—արիւն, վիշտ, բաղց, թալան, սպանութիւն տարածելով այն բոլոր վայրերում, ուր յեղափոխական բանակը երազում էր տեսնել աշխատանքի, արդարութեան ու հաւասարութեան աստւածը...

Ոճրագործ քաղաքականութեան ստեղծած պատկերը՝ սոսկալի է և եզակի.—օրէնք կայ, առանց գործադրութեան. բարձրագոյն հաստատւած դումա, առանց ընտրութեան. ազատութիւն մամուլի և խօսքի, առանց գրելու և խօսելու թոյլտւութեան. „քաղաքացիներ" առանց ապահովութեան. քաղաք ու գիւղեր՝ առանց իրաւասութեան։ Յափշտակումն փողոցում, թալան տների մէջ, գողութիւն գանձարանում, աւազակութիւն պետութեան մի ծայրից միւսը։ Բանտերը լի, դպրոցները փակ. տները փեղկածածկ, զօրանոցները միշտ բաց...

Ոճիրի թագաւորութիւնն է այդ։

Տիրապետութիւնը սև-բեժիմի, որ կատաղած երեկեան հարւածներից, յուսահատ գալարումներ է անում յեղափոխութեան շուրջը, ըմբոստացած նոյնիսկ այն „ոճրագործ քուրմի" դէմ, որի անունով նա այնքան ոճիրներ գործեց, ոճիր անքաւ, անլուր ու անպատմելի...

Յեղափոխական տերրորի „գործադուլը" սաստ և սանձ չ'եղաւ ոճրագործ գլուխների համար, այլ սկիզբն մեծագոյն ամբարտաւանութեան։ Յարութիւն առան նոր Պլեվէներ, նոր անուններով—Սիպեագին, Իգնատիեվ, Դուբասով,—մարմնացումը հալածասէր ցարիզմի, որ ըմբոստացած երկու տարւայ պատմական դէպքերի դէմ՝

երազում է վերականգնել թագաւորութիւնը կնուտի և սուրի,—մոռացնել տալ յեղափոխական դիւցազներգութիւնը, որով երկու տարի է շնչում ու ապրում են արթնացող ժողովուրդները։

Խիզախ է այդ ծրագիրը, բայց մեռելածին։ Ամբարտաւան Ցարիզմը կարող է, այո՛, սարսափ ազդել իր տկարամիտ վիժմունքին, բայց ոչ անվեհեր ցեղափոխութեան, որ յոգնած վշտի ու ստրուկի հեծկլտանքներից, ճակատամարտի և պայքարի Ռազմերգն է որոնում...

ՀԱՄԱԿՐԱՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻՆ

(Ֆրանսերէն անգիպ հեռագրէն)

Պարտք կը զգամ արտայայտելու իմ խորին համակրանքը ձեր ժողովրդի տառապանքներու առթիւ և իմ հիացումը ձեր քաջութեան, ինչպէս և անձնուիրութեան համար՝ հանդէպ ձեր հալածական ազգի։

Հպարտ եմ, որ Պարիզի մէջ առաջինը եղայ՝ հրապարակային ժողովով մը Եւրոպային մատնանիշ ընելու ձեր ժողովրդի մարտիրոսութիւնը և բողոքելու այն լքման դէմ, ուր Եւրոպական դիւանագիտութիւնը գլորեց ձեզ, մոռանալով Բերլինի Կոնգրէսի մէջ իր ըրած հանդիսաւոր խոստումը։ Ես ինձ համար պարտականութիւն մը ըրած եմ՝ Քաղաքական Գիտութեանց ազատ վարժարանի մէջ իմ աշակերտներուս յիշեցնելու ձեր կրած անարդար դժբաղդութիւնները և անտես առնուած իրաւունքները։

Գիտէք նաև, որ Ֆրանսայի մէջ բոլոր կուսակցութիւնները համաձայն են ցանկութիւն յայտնելու, որ վերջապէս զլացուած արդարութիւնը ճանչցի։ Եւ եթէ ձեզ հարստահարողները դեռ չեն պատժուած, եթէ կոտորածներն ու բռնութիւնները, որոնց զոհն են ձեր հայրենակիցները, վերջ զտնալու տեղ նորէն Փոքր-Ասիոյ քաղաքներու և գիւղերու վրայ կը սաւառնին, յանցանքը ամենէն առաջ Եւրոպայի անհամաձայնութեան, նախանձի և թերևս եսամոլութեանն է։ Մեր պարտականութիւնն է ուրեմն անդադար բողոքել բարբարոսական սիստեմատիկ ռեժիմի դէմ, որ ուրիշ նպատակ չ'ունի, բայց եթէ ջնջել ձեր ժողովուրդը։

Շատ լաւ կ'ընէք՝ յիշեցնելով քաղաքակիրթ աշխարհին յարգանքի և համակրութեան արժանի յատկութիւնները ձեր ժողովրդի, որ Ասիոյ միակ կամ առաջին քրիստոնեայ ժողովուրդն է։ Նա պատմութեան մէջ մեծ դեր խաղաց. անիկա ամեն տեսակ դառն փորձանքներ կրեց՝ առանց ընկճուելու, եւ անընդունելի է որ կորսուի այժմ, այնպիսի մի ժամանակ, երբ բոլոր ազգութիւնները կ'երիտասարդանան կամ կը վերածնին։

Ամուր պահեցէք ձեր խանդաղատանքը, հայկական դատի հանդէպ, որը ազատութեան և քաղաքակրթութեան դատ մըն է։ Շարունակեցէք ապրելու արժանի ցոյց տալ ձեզ, և ես կը հաւատամ, որ ձեր ժողովուրդը՝ տառապանքներով շաղախուած ըլլալով հանդերձ, պիտի կրնայ հին Արևելքի մէջ կատարել վերանորոգիչի դերը, որ այդ քրիստոնեայ ժողովրդի ուսերու վրայ կ'իյնայ։

Ձեր դատին հաւատարիմ անձնուէր՝

ԱՆԱՏՕԼ ԼԸՐՈՒԱ ԲՕԼԼԵՕ

„ԴՐՕՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

—

Կ. ՊՕԼԻՍ, դեկտեմբեր 7

Էրզրումի թիւրքական շարժումը առանց հետևանքի չ'անցաւ։ Տրապիզոնի վիլայէթում, Սըվազի շրջանում, ինչպէս և Վանի նահանգում ազգաբնակութեան մէջ բաւական զգալի իրարանցումն կայ Էրզրումի դէպքերի առիթով։ Սուլթանը սարսափահար եղած, հրամանագրեց Զէյթի փաշային, Երզնկեանի շրջանի ընդհանուր հրամանատարին, զէնքով սանձահարել Էրզրումի ըմբոստ ժողովուրդը։ Փաշան գաղտնի ճանապարհով պատասխանել է, որ անկապատակայարմար է ներկայ պայմաններում զօրքը դուրս բերել ժողովրդի դէմ։ Տրապիզօնի պատերին կպցրած ազդագրերը կոչ էին անում՝ դէպի սթափումն ու դիմադրութիւն։ Այդ առիթով մի քանի բարձրաղիր անձինք կալանաւորեցին։ Կիրասոնի մէջ ևս այդ առիթով տեղի ունեցան խլրտումներ։ Պալատական շրջանի մշտական ոճրագործները փորձեցին այդ շարժման մէջ ևս հայկական ազդեցութիւններ որոնել։

—

ԹԻՖԼԻՍ, դեկտեմբեր 16

Ընտրողական նախապատրաստութիւնները սկսած են. սակայն ոստիկանութիւնը, Պետերբուրգից տրուած հրամանի զօրութեամբ, վերադարձած նախկին խստութիւններին, արգելում է հրապարակական ժողովներն ու համախմբումները։ Հակառակ օրէնքի ճանաչած ազատութեան, ադմինիստրացիան ընտրութիւններին նայում է իբրև հակակառավարչական մի գործողութեան վրայ։ Այդ հանգամանքը աւելի ևս գրգռում է դիմադիր տարրերի եռանդը։ Տարաբախտաբար երկրի անապահով վիճակը, անթիւ ու անորակելի սպանութիւններ, թալան, գողութիւն, յարձակումներ, չլատում են ընտրական աշխատանքն ու ծրագիրները։

ԴԺԳՈՀ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆ

—

Սուլթանական ռեժիմի դէմ կուռող տարրերի համախմբման միտքը, երբեմն այնքան երազական և անգործադրելի, մտնում է իրականութեան շրջանը։ Առաջին փորձերից մէկը տեղի ունեցաւ Ժընեվի մէջ, և այն՝ աջող սկզբնաւորութեամբ։

Հելվետեան ականաւոր քաղաքի մէջ—որ կենտրոնատեղին է բոլոր քաղաքական բողոքողների,—կայացան նախապատրաստական ժողովներ, „Դրօշակի" խմբագրութեան նախաձեռնութեամբ, որոնց մասնակցում էին Յոյն, Մակեդօն, Բոլգար, Սերբ, Բոսնիա-Հերցեգովինայի և Հայ կոմիտէների ներկայացուցիչները։ Թիւրքերը բացակայ էին, ներկայացուցիչ չ'ունենալու պատճառով։ Մինչև այժմ միմեանցից քաղաքականապէս խորթացած և յաճախ նոյնիսկ թշնամաբար տրամադրուած խմբերի առաջին ժամադրութիւնն էր այդ, այնքա՞ն ցանկալի աղատագրութեան գործի համար։

Համախմբման նպատակն էր՝ մի կողմից հասարաշխութիւն հաստատել այն բոլոր խմբերի մէջ, որոնք ուղղակի թէ անուղղակի՝ կռիւ են մղում սուլթանների բռնապետութեան դէմ, և միւս կողմից՝ զին-

ւած այդ համերաշխութեամբ ընդհանուր բողոք յայտնել՝ գոյութիւն ունեցող աւերիչ ռեժիմի դէմ, պահանջելով նրա անկումը։

Խորհրդակցական ժողովների մէջ ընդունուած բանաձեւը՝ կոչ է անում Բալկանեան և Փոքր-Ասիական բոլոր ազգութիւններին՝ ա) Հրաժարուել ներքին պառակտումներից և փոխադարձ թշնամութիւններից, որ թշնամու աջողութեան յենակէտն է եղել մինչև այժմ. բ) Միացած և ներդաշնակուած ոյժերով կռիւ մղել Թիւրքական ռեժիմի դէմ, որ արդարութեան և մարդկայնութեան գաղափարի մարմնացած ժխտումն է. գ) Ցանկութիւն է յայտնում իրագործուած տեսնել Մակեդոնիայի, Հայաստանի և Բօսնիա-Հերցեգովինայի ինքնավարութիւնը, ինչպէս և Բալկանեան մանր պետութիւնների դաշնակցութիւնը. դ) Պահանջում է արմատական փոփոխութիւններ և սահմանադրական կարգեր Օսմանեան կայսրութեան բոլոր ժողովուրդների համար իբրև մի դրական միջոց՝ բարելաւելու նրանց դժոխային վիճակը և ե) Յորդորում է բոլոր տարրերին շարունակել սկսած ազատագրական կռիւը, առանց տատանման, միացած ոյժերով, համոզուած՝ որ բարբարոս ռեժիմը մօտենում է իր վախճանին։

Դրա հետ միասին որոշւեց կազմակերպել Ժընեվում— այլ կենտրոններում կրկնելու մտադրութեամբ— մի հրապարակական խոշոր մ ի տ ի ն գ, դեկտեմբեր ամսի ընթացքում, մասնակցութեան հրաւիրելով երկու ականաւոր ֆրանսիացիներ՝ Ժօրէս և Պրեսանսէ։ Սկսւեցին հարկաւոր պատրաստութիւնները։ Սակայն անսպասելի պատճառով, կազմակերպող մարմինը ստիպուած է նախագծած միտինգը յետաձգել մինչև յունւար—որովհետև Պրեսանսէ ծանր հիւանդ լինելով, կարող է Ժընեվ գալ յունւարին միայն, իսկ Ժօրէս, Ֆրանսիայում տեղի ունեցող խոշոր դէպքերի պատճառով, անկարող է դեկտեմբերի ընթացքում հեռանալ Պարիզից։

Ահա Ժօրէսի հեռագիրը, ուղղած „Դրօշակին“.

„Անհնարին է հեռանալ Պարիզից։ Սակայն փափագում եմ միացնել իմ բողոքը ձերինին՝ ընդդէմ սարսափի և արեան ռեժիմի, որ Կարմիր-Սուլթանը տարածել է Հայաստանի և Մակեդոնիայի վրայ“։

ԺՕՐԷՍ

Հրապարակական մեծ ցոյցը, յոյս ունենք, տեղի կ'ունենայ մօտիկ ապագայում, յունւար ամսի ընթացքում, իբրև սկիզբն համաձայն բողոքների, որ այժմ բղխում են ոչ թէ զատ-զատ, այլ բոլոր տանջւածների կրծքից միաբերան և միաձայն...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԹԻՒՐՔ ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏՐԱՊԻԶՈՆ, Նոյեմբեր 21

Համիդեան կառավարութիւնը, հակառակ իր զգուշութեան, խոշոր սխալ մը կը գործէ՝ կասկածելի միւսուլմանները աքսորելով գաւառները, ուր անոնք տեսակ մը պրօպագանտիստներ դարձած են ի վնաս կառավարութեան։ Այս ուղղութիւնը կը շարունակւի և այդ պատճառով երկրին ամեն կողմը իւրաքանչիւր անկիւն կը հանդիպէք իսլամ աքսորեալի մը։ Այդպէս նաւերը միշտ Պոլսէն հոս կը փոխադրեն թէ քաղաքացիական և թէ զինուորական ամեն դասակարգէ պաշտօնեաներ ու սպաներ, ինչպէս և մասնաւոր անհատներ, որոնք կը քշւին դէպի երկրին ներսերը։ Հոս վար դրուած տարագրելոց մէջ կը գտնւի նաև Սուլթան-Համիդի չէրքէզ աներորդին, գնդապետ Իսհագ պէյ իր քրոջ հետ, որոնք կը բնակին քաղաքէն մէկ ժամով հեռու Սօվուգսու կոչուած ամարանոցը։ Անոնց մէջ են նաև քիւրդ Իպրահիմ պէյն ու կիրիտցի Ֆէրիտ պէյը. առաջինը 15 ոսկի, երկրորդը 6 ոսկի թոշակով անւանական պաշտօններ ունեն տեղւոյս մաքսատան մէջ։ Սուրիա աքսորւած նշանաւոր Ֆուատ փաշայի մարդոցմէն Նուրի պէյը, էրզրումցի համբաւաւոր մօլլա մը և դեռ շատեր նոյնպէս հոս են իբր աքսորականներ։ Ամիս մը առաջ ալ վերոյիշեալ Իսհագ պէյի քեռին Պոլսէն քշեցին հոս։

Իսլամներու Ռամազան ամիսը, որ գրեթէ 15 օր առաջ վերջացաւ, այս տարի դժգոհութեանց արտայայտութեան առիթ դարձաւ։ Վերը յիշած էրզրումցի մօլլան, որ այս ռամազանի մէջ հոս քարոզող երեք անւանի մօլլաներէն մինն էր, իր քարոզներու մէջ որոշ ակնարկութիւններ ըրաւ տեղւոյս բարձրագոյն պաշտօնէից գործունէութեան ուղղութեան դէմ, մի բան որ գրգռեց զինւորական հրամանատար Համդի փաշային, որ անմիտ է, ինչպէս ոչխար. միւս կողմէն մօլլայի այս ընթացքը մեծ ուրախութիւն պատճառեց միրալայ Իսհագ պէյին, որ օր մ'ալ քարոզը աւարտածին պէս, մօլլան իր կառքը հրաւիրելով Սօվուգսու տարաւ հետը։ Հրամանատար Համդի փաշա սաստիկ կատաղած մօլլային և մանաւանդ Իսհագ պէյին դէմ, կ'որոշէ վրէժ լուծել։ Նա կ'երթայ մեր հիւանդ կուսակալ Րէշատ պէյի մօտ և սպառնալիքով, ճնշում բանեցնելով անոր վրայ, հեռագիր մը ղրկել կուտայ ուղղակի պալատ, թէ ռամազանի մէջ գիշեր մը փողոցները ցրւած թիւրքերէն յայտարարութիւնը Իսհագ պէյի գործն է, և թէ սա կը գրգռէ թիւրք տարրը՝ սուլթանի դէմ։ Այսքանը բաւական էր։ Անմիջապէս պալատէն հեռագիր կուգայ ռամազանի վերջին գիշերը, կը ձերբակալեն Իսհագ պէյը և նոյն գիշերը ճամբայ կը հանեն դէպի Երզնկա, իբր թէ զինւորական ատեանի մը առջև դատելու համար... իսկ մօլլային բնակած սենեակին դիմացը միշտ երկու փօլիս կը հսկեն՝ ոստիկանական վարչութեան տեղեկագրելու համար, թէ որո՞նք անոր այցելութեան կուգան։ Ոստիկանութիւնը մէկ-երկու տարի այս ընթացքը շարունակեց Մուշի նախկին տեղապահ Գնէլ վարդապետի նկատմամբ ալ, որ հոս վար դրուած է կառավարութեան կողմէ, ուղւած մազպաթան չը ստորագրելուն համար։

Ուրիշ նորութիւն մ'ալ։ Բլաթանայի գայմագամը՝ ժողովրդին կողմէ վռնդւած Կիրասոնի գայմագամէն աւելի ճարպիկ փրթաւ։ Ագչապատի գազային կեդրոնը, Բլաթանայի աւանը՝ կը գտնւին հին տէրէպէյիներու սերնդէն աղաներ, որոնք չեն ախորժիր իրենց հեղինակութիւնը ոչնչացնելու ջանացող ներկայ թիւրք կառավարութենէն, և միշտ խնդիրներ, կնճիռներ ունեն եկող գնացող գայմագամներուն հետ։ Այս տէրէպէյիներու ժառանգորդներէն Սէրտար զադէ Րամիզ

աղա, հաճի Էօմէր զատէ Հիւսէյն էֆէնդի և գազա-յին Թղթակցութեան պետ ճէլալ էֆէնդի, ներկայ գայմագամէն դժգոհ՝ զայն հեռացնելու համար ժողո-վրդեան հանրագիր մը ստորագրել տալու կը ձեռնարկեն։ Խորամանկ գայմագամն ալ՝ ասոր հոտը առածին պէս, Կիրասոնի փորձէն դաս առած կը կանխէ և անմիջապէս պալատ կը հեռագրէ, թէ վերոյիշեալ անձինք ժողովուրդը կը գրգռեն և Էրզրումի նման շարժում մը կը սարքեն, որուն վրայ անմիջապէս պալատէն հեռա-գիր մը կը հասնի և կէս գիշերին մէքթուպճի Սիւրէյ-յա պէյը, Մուսա-Մէհմէդը, ուրիշ կօմիսարներ և ձիա-ւոր ոստիկաններ հետը առած՝ Բլաթանա երթալով՝ կը ձերբակալէ նոյն անձերը, որոնք գիշերը կը փոխա-դրուին հոս և կը բանտարկուին։ Առայժմ յայտնի չէ, թէ արդեօք ասոնք Պոլիս պիտի տարուին, թէ այլ վայր։

Կիւմիւշխանէի սանճագին կից Եաղմուրդէրէի նա-հիյէին միւտիւր Պէհճէթ պէյն ալ սաստիկ կերպով ծեծուած է ժողովուրդին կողմէն։ Կիւմիւշխանէէն քննիչ-ներ և բժիշկ խրկուած են՝ խնդիրը քննելու և Էրզրու-մի կուսակալին տառոսին արժանացած գիւղախմբի միւ-տիրը դարմանելու համար։ Այս գանկոծութեան շարժառիթը դեռ հոս յայտնի եղած չէ։

Վերջերս հինգհարիւրական զուրուշ ամսականով թիւրք լրտեսներ նշանակուած են և խիստ հսկողութիւն կայ։ Հայ փօլիս Մենծիկն ալ մէկ երկու օր է, իբր թէ պաշտօնանկ ըլլալով՝ համազգեստը հաներ է։ Թերևս թիւրք կառավարութեան մէկ խաղն է այս...

ՈՃՐԱԳՈՐԾ-ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ

ՎԱՆ, Նոյեմբեր 14

Բռնակալութեան պաշտօնեաների սրտերը թունա-ւորուել էին։ Պատրաստուում էր մի նոր արիւնոտ Սա-սուն, այս անգամ արդէն Կառկառի և իր ամբողջ շրջանի լեռնագաւառների գլխին։ Հարուածը ուժեղ էր լինելու և արդիւնքը սարսափելի—շահագրգռուած էին երկու Կուսակալներ՝ Բիթլիսի և Վանի։ Առաջինը քա-նի անգամ ամբաստանել էր երկրորդին Բ. Դրան առ-ջև, իբր թէ սա յեղափոխականներին չի հետա-մտում։ Եւ երկուստեք սկսել էր տենդոտ գործունէու-թիւն։ Մէկը իր ամբաստանութիւնը հաստատել էր ու-զում, միւսը աշխատում էր ամեն կերպ արդարանալ, անպարտ դուրս գալ Բ. Դրան առջև։ Ամիսներ շարու-նակ գաղտնի հեռագիրներ էին փոխանակուում կուսա-կալութիւնների, Բ. Դրան, շրջանի գայմագամների ու զանազան գաղտնի գործակալութիւնների միջև։ Սկսուած էին լուրջ պատրաստութիւնների նախնական ձեռնարկ-ներ... Աղթամարի անցեալ դէպքերի ժամանակ թիւրք կառավարութիւնը լաւ ճանաչեց իր թնդանօթների ու զինուորութեան ոյժը. և այն օրից մինչև այժմ սուլ-թանի հաւատարիմ պաշտօնեաները ձգտում են նա-ւատորմիղ կառուցանել Վանի լճի վրայ, որպէսզի կարողանան նոյնպիսի կամ նման պատահարների դէպ-քում՝ անկարգութիւնների առաջն առնել։ Պարզ է, սակայն այդ անուան տակ՝ նրանք իրենց գըր-պանի մասին են մտածում. անցեալի օրինակները դը-րան ապացոյց։ Հայերից պարտքով հաւաքած նիւթե-րով այդ նոյն պաշտօնեաները կառուցել էին այն հրա-շակաւոր „նաւատորմիղը“, որը անկարող եղաւ դէթ մի անգամ չափել Վանի լճի լայնութիւնը, և իր հետ միասին խորտակեց հայ վաճառականների ապրանքները, բայց և այնպէս այդ անյաջողութիւնը չի յուսահատե-ցնում շահագրգռուած պաշտօնեաներին։ Այժմ նրանք նոր վարպետներ են բերել, և մարտանաւերի կառուցման ծրագիրը մշակում է արդէն...

Մի ժամանակ մեր զինուորական վարչութիւնը, հիւ-պատոսների և թիւրք ու հայ խուռն բազմութեան ներկայութեամբ, ռազմափորձեր է անում նոր ստաց-ուած Մաուզերի հրացաններով։ Եւ այս փորձերից ան-միջապէս յետոյ՝ երկու պաշտօնեաներ՝ Ադամ բէյ և Հիւսնին զինուորներով գաղտնի առաջ շարժուեցին դէպի Հարաւ։ Նրանցից առաջ ճանապարհուել էր դէպի Կառ-կառ նաև Բիթլիսի կուսակալը, գործողութիւնները անձամբ ղեկավարելու... Ժողովուրդը անհանգիստ վի-ճակի մէջ սպասում էր կոտորածների սև լուրերին։ Ակամայ սարսափ էր ազդում այն միտքը, թէ մի գու-ցէ աւելի ու աւելի լայնանալով՝ կոտորածը համայ-նատարած բնաւորութիւն ստանար։

Բիթլիսի կուսակալը աչքի էր ընկնում իր անսովոր եռանդով. տրեխներ ոտքերը քաշած՝ յետիոտն առաջ-նորդում էր զօրքին սար ու ձոր, պատրաստ հան-դիպելու „անիծեալ ֆէդայիներին“... Օրեր շարունակ պտտեցին այսպէս, բայց ոչինչ չը գտան, բացի խեղճ ու կրակ գիւղացիներից... Եկան հասան և Խնձորուտ գիւղին, որի մասին թիւրքերն ու քիւրդերը ամեն տե-սակ առասպելներ էին պատմում, առիթ տալով կառա-վարութեան զանազան կասկածների։

Լուր կար թէ երկար թափառելուց յետոյ „անձ-նէր“ կուսակալը իր բարկութիւնը թափելու է խեղճ Խնձորուտի գլխին։ Ուստի լուրը գիւղին հասնելուն պէս գիւղացիք թողնում են իրենց տները և պատ-պարուում են անմատչելի ժայռերում։ Եւ երբ վերջա-պէս կուսակալը հասնում է իր ճանապարհորդութեան նպատակը կազմող փոքրիկ Խնձորուտին, նա գտնում է գիւղը դատարկ, ու զայրանալով, մի քանի ապարդիւն խուզարկութիւններից յետոյ, հրամայում է կրակի մատնել կիսաքանդ խրճիթները։ Այրում են գիւղը... Եւ իր քաջագործութեան գիտակցութեամբ լեցուած՝ կուսակալը վերադառնում է Բիթլիս, ուր գալիս են նաև Հիւսնին ու Ադամ բէյը...

Այս ամենից յետոյ՝ Կառկառի շրջանը հրման է ստանում ամենախիստ կերպով վարուել հարկատուների հետ, գանձել տուրքերը շտապ ու արագ, չը թողնել և ոչ մի ապառիկ։ Թահսիլտարներն ու զափթիէները, ստանալով այս հրամանը, խումբ-խումբ, հերթով այցե-լում են գիւղերը, սուլթանի ողորմութիւնը աւետելու —ժողովրդի արիւնը ծծելու...

ՎԱՆ, 20 Նոյեմբեր

Վերջերս մահմեդական ժողովրդի ներքին կեանքում յեղաշրջումը քանի գնում աւելի ու աւելի է շեշտ-ւում և այդ քանը մեզ համար նոր յուսոյ դռներ է բացանում։ Նշաններ կան, որ թիւր-

քիայի աշխատաւոր ժողովուրդները ժամանակի ընթացքում կարող են յեղաշրջելը։ Էրզրումի վերջին դէպքերը խօսակցութեան նիւթ են դառել այստեղի մահմեդականների մէջ։ Բոլորն էլ միաբերան երկրի ներկայ ծանր դրութիւնը վերագրում են անպէտք կառավարութեան, և իրենց ամենօրեայ խօսակցութեան մէջ արդարացնում են հայերին ու մտրակում իրենց ապիկարութիւնը, որ ցոյց տուին հայկական շարժման ընթացքում։ Դա մի մեծ քայլ է դէպի առաջ։

Նման երևոյթ նկատւում է և քիւրդ աղաների, մանաւանդ հասարակ ժողովրդի մէջ։ Երբեմն-երբեմն աղաները ցանկութիւն են յայտնում յարաբերութեան մէջ մտնել հայ յեղափոխական շրջանների հետ. նրանք նոյնպէս գանգատւում են կառավարութեան դէմ և աւելի վստահօրէն վերաբերւում հայերին՝ ասելով „Ձեր երկարամեայ գործունէութիւնը վերջ ի վերջոյ մեզ համոզեց, որ դուք մեզ դէմ ոչինչ չունէք և կուզում էք ընդհանուրի բարեկեցութեան համար“։ Նրանց ասելով իրենց մտային յեղաշրջման գործում մեծ դեր է կատարել նաև արտաքսման ապստամբութիւնը։ Հասարակ աշխատաւոր ժողովրդի դժգոհութիւնը աւելի է զարգանում և այդ է պատճառը, որ նրանց հետ գործելու յոյսը օրէցօր դառնում է „խելքի մտիկ“։ Ի հարկէ այս բոլորը միմիայն „սկիզբն է երկանց“ և հայ յեղափոխականները չը պէտք է տարուեն միամիտ լաւատեսութեամբ, որպէսզի գործի ժամանակ հիասթափութեան չ'ենթարկուեն։

—

ՄՈՒՇ, 16 նոյեմբեր

Սպանութեան դէպքերը անպակաս են։ Ահա մի քանի դէպքեր։ Այս տարուան յուլիսի վերջերը մշեցի հայ երիտասարդ մը սպանուեցաւ Պիթլիսէն երկու ժամ հեռու Պաշ-Խանի քով, բայց վկայի չգոյութեան պատճառով՝ ազատ արձակուեցաւ։ Սպանեալը իր ծերունի ծնողաց միակ յոյսն էր։—Սեպտեմբեր 5-ին, Բիթլիսէն ժամ մը հեռու, Խուլդուկի մէյդանի վրայ սպանուեցաւ Խուլդուկցի հայ երիտասարդ մը՝ Աւետուր Զարիշեան անունով, շրջակայի քրդերու ձեռքով։ Սպանեալին ծնողքը լալով և սրտաբեկ դիմեցին Գէրիտ պէյին, բայց անգութ վալին կը պատասխանէ. „Կառավարութեան զօրքեր կը սպանուին, ո՞ւր կը մնայ հայը“։ —Սեպտեմբեր 17-ին, պիթլիսցի հայ մը՝ Յովսէփ Արծկեցեան՝ սպանուեցաւ Մուշէն երեք ժամ հեռու, Խաց գիւղի մօտ դեղժմերցի քիւրդերէ, որոնք նախ կը կողոպտեն զինք ու սպանելէ յետոյ դիակը աւազի մէջ կը թաղեն։ Գիշատիչ թռչուններու միջոցով երևան կ'ելլէ դիակը։ Սպանեալին կինն ու զաւակները բոլորովին անտէր ու անպատսպար կը մնան։

—

ԲԻՐԱԿՆ, 4 նոյեմբեր

Մեր շրջաններուն մէջ ամեն օր կը պատահին ցաւալի դէպքեր. կառավարական պաշտօնէից անարդարութիւնն ու կաշառակերութիւնն ընդհանուր է, քրդերի ու չէրքէզների հարստահարութիւններն ու կողոպուտներն ամենօրեայ։ Այդ ամենը մէկդի թողլով՝ այսօր ամենակարևոր հարցն է՝ հացի խնդիրը։ Ժողովրդեան վերին աստիճան աղքատութիւնն ու չքաւորութիւնը ընդհանուր է. հոս հոն գաղթելու տրամադրութիւնն է՝ որ կը սկսի երևան գալ։ Ընդհանուր աղքատութեան վրայ կը բարդւի վերահաս սղութիւնը. այս տարի ամեն կողմ ցորենի մեծ պակասութիւն կը տիրէ։ Հացի գինը խիստ բարձրացած է։ Սովի մը երկիւղը մեծ սարսափ կ'ազդէ ամէնուն և ինչ ընելիքնին չեն գիտեր։ Փախստականներ, կարօտեալներ, մուրացիկներ հոս հոն կը վխտան և թախանձագին դիմումներ կ'ընեն մեզ։ Դպրոցները—մեր միակ մխիթարանքը—ժողովրդեան աղքատութեան երեսէն փակուելու վտանգի ներքև են և եղած աշխատանքները ամուլ կը մնան. քանի մը դպրոցներու համար պատրիարքարանէն նպաստ կը ստացուէր, այն ևս այս տարի դադրած է։

—

ԱԼԱՇԿԵՐՏ, 20 նոյեմբեր

Թիւրքաց Հայաստանի մի քանի մասերում այժմ սով է. դէպքեր են եղել, որ քաղցից մարդիկ են մեռել, բայց և այնպէս կառավարութիւնը խստիւ հաւաքում է հարկերն ու այլ և այլ տուրքերը։ Ընորհիւ այդ պայմանների՝ համարեա օր չի անցնում, որ Վասպուրականից հայեր չը գաղթեն գաղտնապէս դէպի Կովկաս։—Հոկտեմբերի սկզբներին 45 հոգի Վանից ու գիւղերից գալիս են սահմանի մօտ, Արծաբայ դաշտ, ուր նկատւում են սահմանապահ զինուորներից և յարձակման ենթարկւում. նրանցից 31 հոգի կարողանում են փախչել, անցնել Կովկաս. 4 հոգի տեղն ու տեղը գնդակահար ընկնում են, և մնացած 10 հոգին բռնւում են և ենթարկւում դժոխային տանջանքների։ Սահմանագլխի մի ուրիշ կէտում բռնւում են 50 հոգի գաղթողներ, որոնք այժմ Բայազէտի բանտում տառապում են։

ԿՈՎԿԱՍ

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՊՑՅՈՒՂՆԵՐԸ

ԲԱԳՈՒ, Նոյեմբեր 12

Դատարկւում են ամբողջ գաւառներ. Սիսեանը, Խաչէնը, Վարանդան, Զանգեզուրը։ Փախչում են սովից, փախչում են զուլումի երկրից, փախչում են էկզէկուցիայից, փախչում են պատժիչ-զինուորական արշաւախմբերից։

Գալիս ու թափւում են Բագու, հանքային արուարձանները։ Ամեն մի արդէն գործի եղող մշակի կողքին պատսպարւում են մի քանիսը, իւրաքանչիւր „կազարմայում“՝ ոչխարի նման, միմեանց վրայ թափւած, դիզւած են 50, 60, 100 անգործներ։ Շատերն էլ, որոնք չեն գտնում ո՛չ մի անկիւն, մնում են բակերում, փողոցներում, բաց երկնքի տակ։

Եւ դրանց կէսի, քառորդի համար իսկ տեղ չը կայ, աշխատանք չը կայ։ Բանւոր, արհեստաւոր, ծառայող, կառավարիչ, „խազէին“, բուրժուա, ինտէլիգենտ, բոլորն էլ խօսում, հաստատում են այս դառն իրողութիւնը, բայց լուրջ ուշադրութիւն դարձնող, լուրջ ձեռնարկներ անող, հասարակական աշխատանքներ կազ-

մակերպող ո՛չ մի հիմնարկութիւն, ո՛չ մի հաստատութիւն չը կայ։

Բացառութիւններ չեն նրանք՝ որոնք օրերով, շաբաթներով, ամիսներով աշխատանք, գործ խնդրելուց և շրջունակ միևնոյն — „գործ չը կայ“ — պատասխանը ստանալուց յետոյ, աղեկտուր հայեացքով մրմնջում են. „Հոգուտ մատաղ, երեք օր է բերանս պատառ չեմ դրել, հացի փող տուր“։ „Բախտաւորները“ միայն այս տեղ գործ գտնելուց յուսահատ՝ գնում են Անդրկասպեան երկրները, աւելի անծանօթ, աւելի անյուսալի վայրեր...

*

Հաշտութիւն թէ զինադադար — չը գիտենք, բայց իրականութիւնը այն է, որ համարեա դադարել են Թուրք-հայկական ընդհարումները։ Թուրքերը աւելի վստահութեամբ վերադառնում են իրենց քանդած գիւղերը, սակայն 18—19 ամսւայ ընդհարումները իրենց յետևից անխուսափելիօրէն բերել ու բերում են այն բոլոր աղէտները, որոնք գալիս են պատերազմներից յետոյ յաղթող և յաղթուող՝ երկու պատերազմող երկրների գլխին հաւասարապէս։

Եւ Թրքական վոհմակների գազանային յարձակումները, ընդհարումները դադարելուց յետոյ ահա գլուխ է բարձրացնում սովը ընդհարումներին ենթարկուած գաւառներում, որովհետև Ժողովուրդը կամ չը կարողացաւ ցանել, կամ չը կարողացաւ քաղել, կամ թշնամին յափշտակեց, այրեց, և կամ ցանուածը հողից չը քաղուած՝ փչացաւ, ոչնչացաւ մեր երկրներում սովորական բնութեան աղէտներից։

Եւ այժմ սովի սպառնալիքը՝ աւելի քան Թրքական ընդհարումները, աղէտաւոր է թւում, իսկ դրա դէմ կռուելը, պաշտպանուելը գուցէ աւելի դժուարին՝ քան յարձակումների դէմ, որովհետև բէկերը սկսել են իրենց ղեկավարած յարձակումների աղէտներից պակաս մնացածը լրացնել հային հաց չը ծախելու բոյկոտով, իսկ կառավարութիւնը՝ իր յարուցած բազմադիմի դժուարութիւններով ու հալածանքներով։

Ժողովուրդը պաշտպանող ղեկավար-գործիչները 18-20 ամսւայ տենդային աշխատանքից ջարդուած, փշրուած՝ ստիպուած են հեռանալ իրենց շրջաններից և այդ ղեկավար տարրի հեռանալովը՝ վերանում է և կազմակերպութեան զսպող հմայքը, և հասարակութեան տականքները՝ բոլոր դասակարգերից, գլուխ են բարձրացնում, սրում են ատամները աւելի յանդուգն կերպով կեղեքելու, տանջելու, յափշտակելու, բէկցիայի սխրագործութիւնների պակաս թողածը լրացնելու համար...

Պիտի հասնե՞նք արդեօք խաղաղօրէն գարնան դուռը, և եթէ հասնենք էլ, այդ ժամանակ դարձեալ չը պիտի՞ կախւի մեր գլխին Թրքական ընդհարումների սուրը։ Ահա հարց, որին առ այժմ ոչինչ չէ կարելի պատասխանել...

ԿՈՉ

Մեր շրջանի գիւղացիութիւնը ներկայումս տանջւում, քայքայւում է թէ տնտեսապէս և թէ բարոյապէս, բացի ընդհանուր տնտեսական և քաղաքական աննպաստ պայմաններից՝ նաև գողութիւնից ու աւազակութիւնից, որոնց թեւ է տալիս գիւղացիութեան ինքնօգնութեան թուլանալը, շնորհիւ բէակցիայի դաժան բէժիմի։ Աւազակները և գողերը կազմակերպւած կողոպտում են աջ և ձախ՝ թէ հային, թէ թուրքին և թէ վրացուն, խլում են խեղճ գիւղացուց վերջին լծկան եղը, այրում են նրա խոտն ու դարմանը, ահաբեկում նրան։ Հայ-թուրքական կոտորածի մթնոլորտում առաջ եկած մարդկային ստոր և վայրենի instինկտները իրենց զգացնել են տալիս և նրա արտայայտումից տուժում են ամենքը՝ թէ հասարակութիւնները, թէ անհատները և թէ ժողովրդի բարեկեցութեան համար գոյութիւն ունեցող գործերը։ Կառավարութիւնը զբաղուած է միայն և միայն „կրամօլայի“ դէմ կռուելով, իսկ աւազակութիւնների, գողութիւնների և շանտաժի վրայ նայում է իբրև որոշ գործօնների, որոնք քանդում են ժողովրդական ինքնագործունէութեան հիմքերը և դրանով նպաստում կառավարութեանը՝ իր ոճրագործ արարքների մէջ։

Ոճրագործութեան երկու ֆակտորների քայքայիչ ներգործումը հասարակական հիմքերի վրայ ներկայումս հասել է իր գագաթնակէտին. ժողովուրդը հեծկլտում է այդ տանջանքներից։ Սակայն այդ գործօնների դէմ ատելութեան թոյնը լցնում է ժողովրդի համբերութեան բաժակը. ժողովուրդը տեղ-տեղ խիստ պատիժ է տալիս ոճրագործութեան հեղինակներին։

Բայց ի՞նչ օգուտ մասնակի պատիժներից. չարիքի դէմ կռիւը պէտք է լինի կազմակերպւած, ընդհանուր ու որոշ ծրագրով. տանջողները պէտք է ձեռք մեկնեն իրար և ուժգին հարւած տան թշնամուն։ Եթէ ներկայումս կարելի չէ գլխաւոր ոճրագործին՝ կառավարութեանը տապալել, կարելի է վերջ տալ ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող գիշատիչ տարրերի արարքներին։ Դրա համար հարկաւոր է ոչ թէ վհատել ու ողբալ, այլ կազմակերպւել ու կատաղի կռիւ յայտարարել այդ չարագործներին։

Աշխատաւոր գիւղացիութիւն, որ միշտ խորշել ես և խորշում ես աւազակներից ու գողերից, որ կարողացար պատւով դուրս գալ այն սև ու կործանիչ մթնոլորտից, որի անունն է հայ-թուրքական կոտորածներ, դու կարող ես արմատախիլ անել քո միջից և այդ՝ համեմատաբար փոքր՝ չարիքը։ Դա պահանջում է քո բարեկեցութիւնը և այն սուրբ գործը, որի համար դու այնքան արիւն ես թափել։ Դու չը պէտք է թոյլ տաս, որ քո ձեռքով մաքրած հրապարակում խաղեր խաղան գողերը, աւազակները և շանտաժիստները. սրանք պէտք է չքանան, սրանք չը պէտք է խոչընդոտ հանդիսանան քո գաղափարական կռւի ճանապարհին։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ միշտ պաշտպանել է աշխատող, դառն քրտինք թափող ժողովրդին, որ նրա գոյութեան ու բարեկեցութեան նեցուկն է եղել, չի կարող այս դէպքում էլ մնալ անտարբեր. նա ցոյց կը տայ իր աջակցութիւնը այդ ժողովրդին։ Թող լաւ իմանան ուրեմն այդ գիշատիչ տարրերը, որ նրանց քայքայիչ գործութեան վերջաւորութեան ժամը հասել է և թող օր առաջ ձեռք վերցնեն իրենց ոճրագործ արարմունքներից։ Աշխատաւոր ժողովրդի արեան գնով մաքրուող ասպարէզը դրանց համար չէ։

Կեցցէ աշխատաւոր ժողովուրդը.
Կորչի ոճիրն ու ոճրագործ կառավարութիւնը.
Կեցցէ Հ. Յ. Դաշնակցութիւնը.

Հ. Յ. Դ.
ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

1906, Նոյ. 21.

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

VI

ՏԱՔՏԻԿԻ ՄԱՍԻՆ

Իւրաքանչիւր քաղաքական կուսակցութեան տաքտիկը պէտք է սերտ կերպով և օրգանապէս կապւած լինի իր

ծրագրի հետ. իսկ քաղաքական ծրագրերն, իրենց կողմից, տրամաբանօրէն բղխում են այս կամ այն կուսակցութեան հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքից։ Հետևապէս՝ քաղաքական կուսակցութիւնների հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի արգասիքներն են, որոնք ամբողջովին որոշում են տաքտիկը։

Սակայն սրանից կարելի՞ է հետևցնել, որ ուրեմն տաքտիկն ևս մի քարացած ու խիստ դոգմատիկ բան է, որը հաշուի չի առնում կենդանի իրականութեան փոփոխական ու ընթացիկ երևոյթների բազմաձևութիւնն ու բարդութիւնը։ Ամենևին ոչ։

Տաքտիկը այն միջոցների համագումարն է, որոնց օգնութեամբ քաղաքական կուսակցութիւնները յոյս ունին կեանքի մէջ մտցնել իրենց ծրագիրը, լիովին կամ մասամաս։ Եթէ ծրագիրը կենսական է, եթէ նա հաշուի է առնում այն բոլոր էական մոմենտները, որոնք որոշում են բէալ երևոյթների ընթացքը, այդ դէպքում, այդ ծրագրին համապատասխան տաքտիկն ևս կրում է կենսական ճշմարտութեան կնիք։ Բայց ծրագրի կենսունակութիւնը կախուած է այն հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի կենսունակութիւնից, որ իւրացրել են այս կամ այն քաղաքական կուսակցութեան ներկայացուցիչները։ Հետևաբար՝ տաքտիկի նպատակայարմարութիւնը պայմանաւորւում է՛այն հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի գիտական հետևողականութեամբ, որ այս կամ այն քաղաքական կուսակցութեան գործունէութեան հիմքն է կազմում։

Սովորաբար յեղափոխականներին կշտամբում են՝ ասելով թէ նրանք „բէալ քաղաքագէտներ“ չեն, և „բէալ քաղաքականութիւն“ ասելով հասկանում են որոշ վայրկեանի իրական պահանջներն ըմբռնելու, հասարակական ոյժերի իրական յարաբերութիւնը կշռադատելու ընդունակութիւնը, ինչպէս նաև իսկապէս իրականալի և ոչ եթերային խնդիրներ դնելու և լուծելու ձգտումը։

Մենք պնդում ենք, որ այդ տեսակ կշտամբանքներ՝ յեղափոխական կուսակցութիւնների հասցէին՝ չեն դիմանում ոչ մի քննադատութեան, այդ կշտամբանքները արդիւնք են կամ թերամտութեան, կամ որ աւելի վատ է՝ միտումաւոր չարախօսութեան։ Եթէ „բէալ քաղաքականութիւն“ ասելով պէտք է հասկանալ գործունէութեան այնպիսի մի եղանակ, որ խիստ համապատասխան է ճիշտ դնահատուած և լրջօրէն հաշուի առած պատմական երևոյթների ընթացքին, ապա մեր յեղափոխականները, չնչին բացառութեամբ, պէտք է համարուին իսկական „բէալ քաղաքագէտներ“։ Նրանք չեն սաւառնում եթերային, վերին ոլորտներում և նրանց առաջնորդողը իրենց տաքտիկում առասպելները չեն, նրանք միշտ կանգնած են այն պահանջների հողի վրայ, որոնց թելադրողներն են լայն մասսաների տառապանքը, զայրոյթը, բարկութիւնն ու լուսաւորուած գիտակցութիւնը։ Նրանց „քաղաքականութիւնը“ օդում չի կախուած, այլ արմատ գցած՝ կենդանի իրականութեան մէջ՝ սնւում է նրանից. նրանք չեն սոսկում հասկանալու այդ իրականութիւնն այնպէս, ինչպէս պահանջում է ճշմարտի զգացումը առանց կեղծիքի, առևտուրի և տատանման։

Իսկ եթէ „բէալ քաղաքականութիւն“ համարենք երեքուն, փոփոխական, երկչոտ, յարատատան և մի աջ մի ձախ դարձող օպորտիունիզմը—այն դէպքում, այո՛ յեղափոխականները „բէալ քաղաքագէտներ“ չեն, որովհետև նրանք սրտանց ատում են օպորտիունիստներին և համարում են նրանց ամենաանյուսալի, և որ աւելի վատ է՝ ամենախղճուկ տարրը քաղաքական կռուում, մանաւանդ՝ երբ կռիւն ստանում է այնպիսի լայն թափ, որպիսին նա ունի այս րոպէին Ռուսաստանում։

Վերոգրեալը ուղղակի մեղ բերում հասցնում է կադետների տաքտիկին։

Կադետների տաքտիկը... Չը կայ մի աւելի դժուարին և միաժամանակ աւելի դիւրին բան, քան որոշել՝ թէ որն է նրանց տաքտիկը. կադետների տաքտիկը՝ ամենից առաջ որևէ որոշ դիմացկուն տաքտիկի բացակայութիւնն է։ Դա մի շատ նրբազգաց բարոմետրէ, որի բարձրութիւնը ամբողջապէս որոշւում է յեղափոխական մթնոլորտի ճնշումով։ Դա ոչ նուազ նրբազգաց մի հողմացոյց է, որի սլաքը լիովին գտնւում է բնակիչներ և յեղափոխական հողմերի իշխանութեան տակ։

Մեր ազնիւ դիմադրականները (օպպոզիսիոն)—ասում ենք ազնիւ, որովհետև մենք ունինք նաև անպայման անազնիւ դիմադրականներ—ամուր նստել են բեկցիայի և յեղափոխութեան արանքում և դրանով իսկ ընդմիշտ իւրացրել օպորտիունիզմի տաքտիկը։

Ահա՛, յեղափոխութեան ալիքները ուռչեցին և լեռնացան։ Ամենքն էլ յափշտակուած ու թովուած, ահ ու դողով ինչ որ հրաշք սպասելով՝ զմայլանքով նայում են նրանց։ Միայն բեկցիան է, որ չարամտօրէն ատամ է կրճտացնում ու ֆշշում օձի պէս, և զգալով որ հիմա, ոչ ոք նրա դլուխը չունի՝ անցնում է գետնի տակ։ Իսկ օպպոզիցիան սուս ու փուս ծափ է տալիս՝ խնդումներս, բայց և սառսռուռով. խնդում է որովհետև բեկցիայի բանը բուրդ եղաւ, և սարսռում, որովհետև սեփական ապագայի ահը բռնում է նրան...

Բայց ահա յեղափոխական ալիքն ընկրկեց, փշրուելով „հին կարգը“ պահպանող սեինների հսկայական քանակի հանդէպ։ Բարոմետրային ճնշումն պակասեց։ Կենսական ծովի ալեծուփ մակերեսին միայն թեթև վեռվեռումներ են նկատւում։ Հողմը փչեց յետադիմութեան սառն ափերից։ Ինքը բեկցիան վեր քաշեց դլուխը և ահա օրէցօր, աւելի և աւելի զօրեղ է հնչում չարութիւնից խեղդուող նրա ձայնը։ Ի՞նչ բանի է օպպոզիցիան։ Նա այլևս ծափ չի տալիս, նոյնիսկ սուս ու փուս... Նա յուսակտուր՝ կորցրել է դլուխը։ Թոչնեց վարդերանդ կարմիրը, որ խնդ ու ծափի օրերին սկսել էր վառվռիլ նրա անարիւն այտերին։ Նրա շանթարձակ ճառերի ծպտունը չը կայ, կիսաձայն՝ ինչ որ խղճուկ բառեր է թոթովում նա „ուտոպիստների“ և „բէալ քաղաքագէտների“ մասին, դեր ապօրինութեան դէմ „օրինական միջոցներով“ կռիւ մղելու անհրաժեշտութեան մասին. նա նոյնիսկ հրաժարւում է այն կրաւորական դիմադրութիւնից, ուղղած կամայականութեան ու բռնութեան ոմանց, որ ինքն էր հրամանագրում Վիբորգի համագումարում։ Միթէ տխրալի չէ այս, միթէ վիրաւորական չէ... ազնիւ օպպոզիցիայի կողմնակիցների համար։ Աւելի քան տխրալի, աւելի քան վիրաւորական...

Բայց ի՞նչն է պատճառը այս երերուն և հողմավար տաքտիկի։

Սրա բացատրութիւնը նախ այն է, որ նրանք բուռն ցանկութիւն ունին հաշտեցնելու անհաշտելին, և ընթանալու երկու միմեանց ժխտող ուժերի հաւասարաչափ։ Բռնելու միջին ընթացք այնտեղ, ուր պատմական հանգամանքների բերումով՝ կամ հոսանքի հետ պիտի դնալ կամ հոսանքի հակառակ։ Պարզ է, որ այս վիճակում՝ մարդ որքան էլ կուչ ու հուպ դայ, ոտները գետնին թակելուց՝ հեռու չի գնայ։ Կիսատ-պռատ, ստավախութեան կնիք ունեցող աշխարհայեացքը * բերում հասցնում է կիսատ-պռատ ու անորոշ քաղաքական ծրագրի. իսկ խառնածին ծրագիրն անհրաժեշտօրէն քաշում է իր ետևից համապատասխան տաքտիկ, այսինքն՝ դիջումների, աջ ու ձախ ընկնելու, խուսափումների և ջուր ծեծելու տաքտիկը։ *C'est la fatalité.*

Եւ որքա՞ն հաճելի է, այս ճօճուող, աչք ու ականջ յոգնեցնող տաքտիկից յետոյ հանգիստ առնել մեր յեղափոխական կուսակցութիւնների տաքտիկական գործակերպերի վրայ, թէկուզ հէնց սոցիալ-դեմոկրատների տաքտիկը,—որտեղ եթէ ոչ ամեն ինչ, գոնէ շատ բան պարզ է ու որոշ։

Սոցիալ-դեմոկրատները պնդում են, որ անհրաժեշտ է ամենաեռանդուն սոցիալիստական պրոպագանդա անել բանւորական—իսկ վերջերս նաև գիւղացիական—լայն

*) Տես նախորդ զլուխ։

մասսաներում։ Այս տաքտիկական գործակերպը սերտ կապված է նրանց վերջնական նպատակի հետ,—այն է՝ նախապատրաստել այդ մասսաները սոցիալական յեղաշրջման համար, յանուն „աշխատանքի և արդարութեան թագաւորութեան“ իրականացման“, այսինքն սոցիալիզմի։

Բայի դրանից, սոց.-դեմոկրատները պնդում են նաև, որ անհրաժեշտ է ամենաեռանդուն ագիտացիա անել դարձեալ նոյն քաղաքային պրոլետարիատի և գիւղացիութեան լայն խաւերում, նպատակ ունենալով կազմակերպել այդ մասսաները՝ „կործանելու ցարի միապետութիւնը և նրա տեղ ռամկավար հանրապետութիւն հաստատելու“ համար։ Տաքտիկական այս գործակերպն ևս անմիջօրէն բղխում է նրանց վերջնական նպատակից. քաղաքական և քաղաքացիական ազատութեան բացակայութիւնը Ռուսաստանում խոչընդոտ է հանդիսանում, նրանց կարծիքով, տնտեսական զարգացման և դրանով իսկ խանգարում է պրոլետարիատի դասակարգային կռուի զարգացմանը ու նպաստում է „պետութեան և ունևոր դասակարգերի ձեռքով բազմամիլիոն գիւղացիութեան շահագործումի ամենաբարբարոս ձևերի պահպանման և զօրեղացման“*. իսկ այդ ամենը միասին վերցրած, անկասկած, բռնում է սոցիալիստական շարժման անիւը և դանդաղեցնում „աշխատանքի և արդարութեան թագաւորութեան“ իրականացումը։

Սոցիալ-դեմոկրատները, վերջապէս, ամեն կերպ աշխատում են պաշտպանել և նպատակայարմար հունով առաջ վարել քաղաքային պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական կռիւը։ Այդ նպատակով՝ նրանք ձգտում են կրթել նրա մէջ լուրջ վերաբերմունք դէպի գործադուլը, քաղաքական և տնտեսական, ինչպէս և դէպի ցոյցերը։ Նրանք ձգտում են կազմակերպել պրոլետարիատից մարտական շարքեր, հոծ և լաւ զինուած թշնամու դէմ „ընդհանուր յարձակում“ անելու համար։ Եւ տաքտիկային այդ գործակերպը, կասկած չը կայ, սերտ կապ ունի նրանց մօտաւոր և վերջնական նպատակի հետ։ Վստահ չը լինելով, որ կառավարութեան և աշխատաւոր դասակարգերի միջև սկսած պայքարը կարող է խաղաղ վախճան ունենալ, նրանք պատրաստում են պրոլետարիատը „զինուած ապստամբութեան“ համար, որպէսզի „ժամով ձեռք բերեն այնպիսի պայմաններ, որոնց մէջ դէպի սոցիալիզմն ընթացող շարժումը նուազադոյն արգելքների կը հանդիպի։

Սոցիալիստ-յեղափոխականների տաքտիկը, որ նոյնքան հոյակազմ է և հետևողական, միաժամանակ կրում է աւելի ռազմիկ և յեղափոխական ոգի։ Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը, երևան գալու օրերից արդէն, միշտ կողմնակից է եղել այնպիսի տաքտիկի, „որը տեղ է տալիս յեղափոխական եռանդի բոլոր տեսակներին, բոլոր ուժերին, հակումներին և ընդունակութիւններին· ներդաշնակօրէն միաձուլելով կռուի բոլոր ձևերն ու մեթոդները՝ մինչև ամենաահարկուներն ու վճռականները, և այդ ամենը դարձնելով մի վճռական ու բազմակողմանի գրոհ կառավարութեան դէմ“**։ Սոցիալիստ-յեղափոխականները ընդունելով կռուի այն բոլոր մեթոդները, որ գործադրում են սոցիալ-դեմոկրատները, միաժամանակ միշտ մտածել են „կառավարական ճնշումներին հակահարուած տալու, անմիջական կռուի, զինուած կռուի և այդ կռուի տարբեր ձևերի մասին“ (ibid)։ Եւ ահա „կռուի հնարաւոր ձևերի“ շարքում՝ նրանք միշտ գործադրել են և շարունակում են գործադրել տերրորը։

Դեռ ևս իրենց գործունէութեան սկզբում, սոցիալիստ-յեղափոխականները՝ իրենց ամենայայտնի ղեկավարներից մէկի բերանով ասում էին. „Տերրորական կռուի ընդդէմ իսկ, որ նախ և առաջ կապված է արիւն թափելու հետ՝ այնպէս է, որ մենք ամենքս ուրախութեամբ կընդդրկենք ամեն մի պատճառաբանութիւն, որը կարող է մեզ ազատել կենդանարար խօսքի զէնքը կուիների մահաբեր զէնքով փոխարինելու անհրաժեշտութիւնից։ Բայց մենք ամեն ժամանակ ազատ չենք միջոցներ ընտրելիս“։ Ու յետոյ. „Սարկութեան ու լռութեան աշխարհում, այն աշխարհում, ուր միլիոնաւոր մարդիկ դատապարտուած են կիսաքաղց և անասնական գոյութեան և ենթակայ են հոգեկան տգիտութեան, բիրտ մնապաշտութեան և բարոյական մահուան սարսափին. այնտեղ, ուր կառավարող խումբը իրաք լողում է իր դժբախտ զոհերի արեան և արցունքի մէջ, և դժնեայ խստութեամբ ու լպիրշ ծաղրանքով է պատասխանում դիմադրութեան ամենաթոյլ արտայայտութիւններին,—այդպիսի մի երկրում, մեր բարոյականութեան համաձայն, մենք ոչ միայն իրաւունք ունինք, այլ և աւելին, մենք բարոյապէս պարտաւոր ենք՝ կշռի մի թաթում դնել մարդկային տառապանքի այդ ծովը, իսկ միւս թաթին՝ դրա պատուհասն եղողների հանգիստը, ապահովութիւնն ու նոյնիսկ կեանքը“ (ibia)։

Եւ այս խորապէս ողբերգական, ներքին բարոյական դատաստանն արտասանեց իր վճռական, անդառնալի „այո“-ն յօգուտ տերրորի և սոցիալիստ-յեղափոխականներն իրենց տաքտիկի մէջ մտցրին նաև տերրորը։

Բայց այս դեռ բաւական չէ։ Զգացումների տրամաբանութիւնից զատ՝ այդտեղ մեծ դեր է խաղացել և մտքի տրամաբանութիւնը։ Տերրորը կռուի զէնք ընդունեցին ոչ միայն բարոյական, այլ և բացիօնալ կշռադատումներով։ Տերրորը, ասում են սոցիալիստ-յեղափոխականները, „անհրաժեշտ ինքնապաշտպանութեան զէնքերից մէկն է“, նա ագիտացիայի մի հզօր միջոց է. նա իր վրայ է գրաւում ընդհանուրի ուշադրութիւնը, քնասթափ է անում ամենքին, զարթեցնում է ամենաթմրած և ամենաանտարբեր մարդկանց... ստիպում է նրանց քաղաքականապէս մտածել նոյն իսկ իրենց կամքի հակառակ“... Ի հարկէ յեղափոխական կռիւն տերրորական գործողութիւնների վերածելն բացիօնալ չէ, նոյնիսկ անիմաստ բան է, որովհետև տերրորը—„կռուի տեխնիկական գործակերպերից մէկն է լոկ, և միւս գործաձևերի հետ կապակցելով է միայն, որ նա կարող է երևան հանել այն բոլոր ազդեցութիւնը, որի վրայ յոյս են դնում սոցիալիստ-յեղափոխականները“։ Նրանք միշտ հակառակ են եղել և միշտ էլ հակառակ կը լինեն միակողմանի և բացառիկ տերրորիզմին, որովհետև նրանք ցանկանում են „ոչ թէ փոխարինել, այլ զօրեղացնել ու լրացնել միայն մասսայական կռիւը՝ ռազմիկ առաջապահների յանդուգն հարուածներով, որոնք թշնամի բանակի սրտին են ուղղուած“ (ibid)։

Աննպատակ չէր, որ մենք երկար կանգ առանք սոցիալիստ-յեղափոխականների պատճառաբանութեան վրայ յօգուտ տերրորի։ Սոցիալիստ-յեղափոխականների ամբողջ տաքտիկը ներդաշնակօրէն կապված է նրանց ծրագրի՝ հետևապէս և նրանց հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի հետ.—նրանք տերրորիստներ են ոչ թէ իրենց տեմպերամենտով, ոչ թէ որովհետև համարձակութիւնն ու յանդգնութիւնը բացառապէս միայն նրանց է յատուկ, այլ իրենց հասարակա-փիլիսոփայական աշխարհայեացքի մի քանի խիստ կարևոր կէտերի պատճառով։ Մինչդոյն դրդումներով է որ սոցիալ-դեմոկրատները սկզբունքով հակառակորդ են կռուի տերրորական գործակերպերին։

Պատմական պրոցէսի միակ ներգործօն տարրը, սոցիալ-դեմոկրատների կարծիքով, հանդիսանում են մասսաները։ Նրանք համարեա ոչ մի նշանակութիւն չեն տալիս առանձին անձերին, „հերոսներին“, այս բառի ուղղակի կամ փոխաբերական առումով։ Կարևորն այն չէ՝, ասում են նրանք, որ մէջտեղից վերացնենք Կիրակոսին կամ Մարկոսին, որոնք պատմական հանգամանքների քմայքով՝ այսօր ձեռք են առել կառավարութեան ղեկը և դրանով իսկ հնարաւորութիւն են ստացել ճնշելու և բռնանալու սարկացրած մասսաների վրայ. կարևորը՝ այն բոլոր պայմանների ոչնչացումն է, որոնք կեանքի բեմն են դուրս բերել այդ Կիրակոսներին ու Մարկոսներին։

Սոցիալիստ-յեղափոխականները այլ կերպ են մտածում։ Նրանք պնդում են, որ պատմութիւնը ստեղծում են ոչ

---

* Տես „Ռուս. Ս. Դ. Բ. Կուսակց.“ ծրագիրը։

** „Տաքտիկի եւ ծրագրի հարցեր“—ժողովածու „Յեղափոխական Ռուսաստանի“ յօդուածներից։

միայն մասամները, այլ և „լիակատար իշխանութիւն" ունեցող Կիրակոններն և Մարկոններն։ Ուստի, նրանց կարծիքով, ոչ միայն պէտք է ոչնչացնել այն պատմական պայմանները, որոնք հասարակական պիրամիդի գագաթն են բարձրացրել բռնաւորներին, այլ և պէտք է ոչնչացնել նոյնպէս և Կիրակոններին և Մարկոններին, որոնք պաշտպանում են այդ պայմանները։

Այսպիսով, ինչպէս տեսնում էք, դէպի ա ն ձ ի պատմական դերն ունեցած տարբեր վերաբերումը մեզ տանում հասցնում է տերրորի տրամագծօրէն հակադիր գնահատութեան, իբրև յեղափոխական կռւի մի անկախ ձևի..

Մենք ընդգծեցինք այն բոլորը, ինչ որ ամենից կարևորըն էր Ռուսաստանի երեք՝ ամենաուժեղ քաղաքական կուսակցութիւնների տաքտիկի մէջ։ Մենք ժամանիչ արինք նաև այն ամենը, ինչ որ բնորոշ է նրանց ծրագիրներում։ Եւ դրանով էլ վերջացնում ենք։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ԱՐԵԱՆ ԷՋԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԱՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Շարունակութիւն)

Կ ա ր ն ո յ դ ա շ տ ի ն 22 գիւղօրէից մէջ ինչք գոյք, ուտեստ և անասուն աւարի կը տրւին, մարդեր կսպանւին և կվիրաւորւին։ Անոնց բնակիչներն վերջին թշւառութեան կը մատնւին։ Այս գիւղերէն Ումտում, Գոմք և Դիֆիկ անուն գիւղօրէից եկեղեցիները կայրւին և կը քանդւին։ Ումտում և Գոմք գիւղերու քահանաներ կսպանւին։

Կարնոյ Նահանգին Դ ե ր ջ ա ն և Բ ղ ի գաւառներու մէջ ևս քիւրդերը և նմանօրինակ չարագործք մարդիկ կը սպանեն և կը վիրաւորեն, ինչքերն ու անասունները աւարի կուտան և թշւառութեան կը մատնեն այդ գիւղերուն հայերը։

Հոկտեմբեր ամսոյ 9-ին, առաջին անգամ և մի քանի օրէն՝ երկրորդ անգամ ըլլալով՝ սպառազինեալ քիւրդեր և թիւրքեր Կարնոյ Նահանգին Ե ր զ ն կ ա քաղաքին վրայ խուժելով՝ հայոց կրպակները կը կոտրեն, ինչքերը աւարի կուտան և արհեստաւորաց գործիքները կը յափշտակեն և շատ մը հայեր կը սպանեն։

Այդ քաղաքէն մէկ ժամ հեռաւորութիւն ունեցող Մ ա թ ի ն ի անուն գիւղն, որ 120 տունէ կը բաղկանայ, յարձակման ենթակայ կը լինի։ 15 հայ կը սպանւին և ողջ մնացողները մերկ և անօթի Գաղայ դիմելով կապաստանին։ Մօտի Բոլանկա, Տէճարակ, Շախլը, Գիզնէճիք, Արղան, Խնձորիկ և Գարաթող անուն գիւղերու և այլ տեղերու վրայ ևս յարձակում կ'ըլլայ և ժողովրդեան բոլոր գոյքերն՝ ինչքերն ու գործիքները աւարի կը տրւին, և բազում հայեր կը սպանւին և կը վիրաւորւին։ Խնձորիկ և Գարաթող գիւղերուն երկու քահանաներն և իրենց երկու զաւակներն կը մեռցւին։ Բաղեան գիւղի հայերը գիւղին եկեղեցին ապաստանած էին, փրկելու համար իրենց կեանքը և պատիւը։ Յարձակւողները գիւղը ամբողջովին կողոպտելէ վերջը եկեղեցի կը խուժեն և 33 այր և կին, աղջիկ, և տղայ և եկեղեցոյ քահանան կը մեռցնեն և շատերըն ալ կը վիրաւորեն։ Երզնկայի մօտակայ վանքերէն ոմանք այս կոտորածէն առաջ կողոպտուած էին արդէն. մնացածները այս անգամ իրենց ամբողջ անասուններովն կողոպտուեցան և կործանեցան։ Ս. Լուսաւորիչ անուն վանքին վանահայր Տէր-Ղևոնդ քահանան և այլք նոյն վանքին մէջ կը սպանւին, և այս կերպով Երզնկայի և գիւղօրէից հայերը վերջին ծայր թշւառութեան կենթարկւին և գիւղերն ու վանքերը կը կործանւին։ Շատ մը հայեր, ընդ որս և Երզնկայի առաջնորդական փոխանորդ Տէր-Գէորգ քահանան, կը բանտարկւին. կոտորածին հեղինակներն ու պատասխանատուները հայերը եղած լինել ցոյց տուող հեռագրի օրինակ մը շրջաբերութեան կը հանւի։

Մարթինի հրացաններով և այլ զէնքերով սպառազինեալ քիւրդեր, սեպտեմբեր ամսի վերջի օրերէն ըսկսելով, կը յարձակին Երզնկայի Քէմախ գաղայի Թավկներ, Ե օ գ ա ր ը և Ա շ ա ղ ը Բագառիճ, Մաբէկ, Գոմար, Քէրմանէ, Հասան-օվա և Հօղոս անուն գիւղօրէից վրայ, շատ մը հայեր կը սպանեն և կը վիրաւորեն, եկեղեցիներն ու տուները մտնելով ամբողջ գոյքերն, հագուստներն, արմտիքը, ոչխարներն և անասունները աւարի կուտան և բոլոր այս գիւղերը կործանելով, բազում հայեր անօթի և անպատսպար թշւառութեան մէջ կը թողուն։

Հոկտեմբեր 25-ին Երզնկայի Գուրուչայ գաղայի Արմուտան-Քեպիր և Արմուտան-Սաղիր անուն գիւղերու վրայ կը յարձակին շրջակայ գիւղերու և Տէրսիմի Օվաճըգ ըսւած տեղւոյն հազարի չափ սպառազինեալ քիւրդերը, հետերնին ունենալով նահիէի միւտիրներ։ Ամբողջ գոյքերն, ուտելիքներն ու անասունները աւարի կուտան, եկեղեցւոյ վրայ կը խուժեն ու ամբողջ նւիրական անօթներն, սպասներն, արծաթեայ խաչերը և արծաթապատ աւետարանները կը կողոպտեն, Տ.-Յակոբ և Տ.-Գրիգորիս քահանաները ու 30-ի չափ հայեր կը սպանեն և նոյնքան մ'ալ կը վիրաւորեն։

Իզմիդ սանճախի Կէյվէ գաղայի Ագհիսար նահիէին մէջ, սեպտեմբեր ամսոյ 27-ին, չորեքշաբթի, ըստ սովորութեան՝ առևտուրի պազար բացւած էր. երբ շրջակայ գիւղերէն հայեր կուգան բան վաճառելու և գնելու համար, նահիէի միւտիրը Հիւսէին էֆէնդի՝ հայերու վրայ խուզարկութիւն կատարելով՝ իբրև զէնք գտած անկարևոր դանակներն և զմելիները կը ժողվէ։ Եւ երբ հայերը քիչ յետոյ առևտուրի կը սկսին, ըսպառազինեալ շատ մը միւսուլմաններ հայոց վրայ կը յարձակին, 33 հայ կը սպանեն և ամբողջ վաճառքնին և դրամին կը կողոպտեն։ Կոտորածն և աւարառութիւնը կը տևէ մինչև երեկոյեան ժամը 11-ը։ Իզմիդի միւթէսէրիֆը և Կէյվէյի գայմագամը նոյն օրը, երեկոյին, կոտորածին վայրը եկած ըլլալով և տեղեկանալով, որ սպանւածների դիակները հորերը նետած են, հանել կուտան հորերէն. դիակները ինչպէս լսւեցաւ, թւով 33 են. 50 ալ վիրաւոր կը գտնեն։

Այս դէպքը շրջակայ գիւղերը թշւառութեան ենթարկեր է և ամէնքն ալ սարսափահար ըրած է։ Հոկտեմբեր 8-ին և 20-ին, երկու անգամ զինւորներ և պաշիպօզուկներ յարձակեր են Կիւրլէ անուն գիւղին

վրայ և ասպատակութիւնք գործեր են։ Ջէնք գտնելու մտօք՝ եկեղեցին մտեր և ամենէն նուիրական վայրերը անարգաբար խուզարկութեան ենթարկեր, նուիրական մատենի մը վրայի արծաթեայ խաչը կորզելով տարեր և գիւղի քահանան ալ գանակոծեր են։ Միւնոյն նը-պատակաւ տուներն ալ խուզարկեր են, շատ հայեր ծեծեր ու վիրաւորեր են և 20 հայ բանտարկեր են։ Այս դէպքերու պատճառաւ ահ ու սարսափի ենթարկ-ուող երկու յղի կիներ վիժեր են։ Ագիսարի դէպքին հեղինակները և գործողները և ասոնցմէ օրինակ առ-նող ուրիշ տեղերու չէրքէզները, միւսուլմանները Իզմի-դի Եէնի քէօյ և Եալօվա գիւղերու հայ բնակչաց վը-նասելու ձեռնարկած են, որով ապահովութիւնն և անդորրութիւնն խանգարուեր և ժողովուրդը մեծապէս վնասուեր է։

Վանայ նահանգին Ագէլճէվազ, Արճէշ, Աղբակ, Բերկրի անուն գաղաններու, նահիէներու և Վանայ շրջ-ակայ բոլոր հայ գիւղօրէից, եկեղեցոց և վանօրէից ինչքերը, գոյքերն ու ուտելիքները, ոչխարներն ու ա-նասունները ամբողջովին աւարի կը տրուին և բազում հայեր կը սպանուին և կը վիրաւորուին. հազարաւոր մարդեր խումբ-խումբ, բաղցած և անպատսպար, փա-խուստ տալով կուսակալութեան կեդրոնն՝ Վան կապաս-տանին։ Եթէ այս թշուառաց օգնութեան չը հասնի, կը կարծուի, որ մի կողմէ անօթութիւնը, միւս կողմէ ձըմ-ռան սաստկութիւնը զիրենք բոլորովին պիտի ոչնչացնէ։

Վան քաղաքի մէջ ևս յարձակում, կոտորած տեղի ունենալու երկիւղը պաշարած ըլլալով՝ կրպակները և խանութները փակուած են և առևտուրը դադրած։

Այս կոտորածին և աւարառութեան գլխաւոր հե-ղինակները Համիդիյէի վաշտերու զինուորներն ու հրա-մանատարները եղած են, որք սպառազինեալ են և տե-ղական կառավարութեան կողմէ չեն արգիլուած և հա-զարաւոր անզէն հողագործներ թշուառութեան յետին աստիճանը հասուցած և այնքան գիւղեր աւերած ու կողոպտած են։ Պիթլիսի նահանգի մէջ, բուն Պիթլիս քաղաքի հայերը զգալով, որ միւսուլմանք հայերը սպա-նելու և քաղաքներնին աւարի տալու պատրաստուած են և ասոր մէջ տաճկաց իլլեմաններուն մատը կայ, տեղւոյն առաջնորդական փոխանորդը իր հետ ունենալով չորս յայտնի անձինք, հոկտեմբեր 12-ին, կուսակալի փո-խանորդ Էօմէր պէյին կը դիմէ և կը բացատրէ իրենց վիճակը։ Էօմէր պէյ, ի պատասխան կը յայտարարէ, թէ անդորրութիւնը վրդովող որևէ դէպք տեղի չը պիտի ունենայ, թէ երկիւղի և մտահոգութեան պատ-ճառ չը կայ, և եթէ ժողովրդէն մէկուն վնաս մը գա-լու ըլլայ՝ ինքը անձնապէս պէտք է տուժէ։ Հետևեալ օրը, ուրբաթ, տեղւոյն իսլամները, օրուան աղօթքէն վերջ՝ սպառազինեալ դուրս կ'ելլեն մզկիթներէն և յանկարծուստ կը խուժեն շուկային վրայ, դէմերնին ելած հայերը կը վիրաւորեն, կը սպանեն և բոլոր կրպակներու ու խանութներու ամբողջ վաճառքները, ինչքերը և դրամները աւարի կառնեն։ Տներու վրայ ալ յարձակելով միւնոյն խժդժութիւնը կը գործեն։ Պիթլիսի շուկան կառավարութեան պաշտօնատեղիէն և զինուորանոցէն 5 վայրկեանի հեռաւորութիւն ունենա-լով, անշուշտ կարելի էր դէպքի առաջն առնուլ։ Թէև երեկոյեան ժամը 9-ին միջոցները կանոնաւոր զօրք և ոստիկան զինուորներ և ժանդարմներ կը հասնին, սա-կայն ասոնք իբրև հանդիսատես կը կենան և մինչև իսկ աւարառութեան կը մասնակցին։ Ցափշտակած ինչ-քերն ու գոյքերը ձիերու վրայ բեռցնելով՝ յայտնի հա-մարձակ կը փոխադրեն զինուորանոց. զինուորական հի-ւանդանոցը աւարի առնուած ինչքերով կը լեցնեն։

Սպանեալ հարիւրաւոր հայոց, քահանայից և 5—15 տարեկան անմեղ տղայոց դիակները, երեք օր փողոց-ները տիղմերու մէջ կը մնան ու ոտնակոխ կըլլան։ Այս դիակներու վրայ արքունի զինուորաց յատուկ մարթինի և գաբագլը հրացաններու տուած վէրքերը տեսնուած են։ Քանի մի դիակներ իբր միւսուլմաններու դիակներ, միւսուլմանաց գերեզմանատունը փոխադրուած և թաղուած են, մինչդեռ ստուգուած է, որ ասոնք ծա-նօթ հայերու և Մխիթար քահանայի դիակներն էին։

Այս կոտորածը և աւարառութիւնը ի գործ դնող միւսուլմաններէն դեռ ո՛չ ոք չէ ձերբակալուած։ Ասդին անդին ծակամուտ ըլլալով ու խաւերու մէջ պահըտե-լով մահուանէ ազատուող հայեր և ասոնց երևելիներէն ոմանք կառավարութեան կողմէ բանտարկուած են և ասոնց վրայ ճնշում ի գործ կը դրուի՝ խոստովանելու և ստորագրութիւն տալու, որպէս թէ կոտորածին և աւարառութեան պատճառ եղողները քրիստոնեայք ե-ղած լինին։ Այս մասին առաջնորդարանին կողմէ ի պատ-րիարքարան 25 հոկտեմբեր թուականաւ հեռագիր մը կը զարնուի, բայց հեռագիրը չը յանձնուիր պատրիարք-քարանի։

Պիթլիսի շրջակայ գաւառներու շատ մը գիւղօրէից մէջ միւնոյն կոտորածի և աւարառութեան եղեռնա-գործութիւնը տեղի կունենայ, որով Պիթլիսի և շրջա-կայ գիւղօրէից հայ ժողովուրդը վերջին ծայր թշուա-ռութեան ենթակայ կըլլայ։ Պիթլիսի կոտորածէն ան-միջապէս ետքը, Մուշի մէջ ևս թիւրքերն և քիւրդերը յարձակման, անձեր վիրաւորելու և սպանելու եղեռ-նագործութիւն կը սկսին։ Քիւրդերը Մշոյ դաշտին և Պուլանըդ գաղայի շատ մը գիւղերու մէջ հայերը սպանելով հանդերձ՝ անոնց ինչքերը ու կենդանիները կողոպտած, աւարի տուած են։ Մինչդեռ Մշոյ և շրջա-կայ գիւղօրէից հայ ժողովուրդը ահ ու սարսափի մէջ կը գտնուի, հոկտեմբեր ամսոյ 25-ի գիշերը ճիպրան-ըը քիւրդ աշիրէթի ազաներէն Սոֆու անուն անձը, 40 արբանեակներովն հանդերձ, Մշոյ ս. Կարապետ վանքի 553 հատ ոչխարը աւարի կուտայ՝ ըսելով թէ, վանքն ալ պիտի կողոպտէ։

Պիթլիսի նահանգի Սղերդի սանճախին Խիզան, Սբարկերդ և Կարկար գաւառներու, նահիէներու և գիւղերու մէջ քիւրդերն ու թիւրքերն հայոց վրայ յարձակելով՝ վիրաւորեր ու սպաներ են և աւարառու-թիւն գործեր են։ Խիզան գաղայի ս. Խաչ վանուց վանահայրը՝ Սահակ վարդապետը և Պրօլէնս գիւղի քահանան սպանելով չեն բաւականացած, այլ և վայ-րենաբար մորթերնին հանելով կախեր են ծառէ մը ի տես ժողովրդեան։ Խորկորս գիւղի երեք քահանաները սիւննի միւսուլման ընելով՝ գլուխնին բաթ-թոց կապեր ու փողոցները պտտցուցեր են։ Այս տե-

ղերու հայոց ամբողջ ինչքերը, գոյքերը և գործիքները յափշտակելով հանդերձ հարիւրաւոր անձեր ալ վիրաւորեր և սպաներ են։ Իսկ կոտորածէ ազատուած 800 տնւոր քրիստոնեաներու բռնութեամբ և մահու սպառնալիքով մահմեդական կրօնը ընդունել տրուած է։

Սվազ քաղաքի շրջակայ գիւղերու, գաւառներու և սանջակներու մէջ տեղի ունեցած կոտորածն և աւարառութիւնը նոյնիսկ կուսակալանիստ քաղաքին վրայ ալ տարածուելու կասկածն գոյանալով՝ հայերը ահ ու սարսափի կը մատնուին։ Եւ մինչդեռ թէ տեղական կառավարութեան և թէ իսլամ հասարակութեան երևելեաց կողմէ ապահովիչ և անդորրիչ խօսքեր կը գրուցուին, թիւրք սպառազինեալ խուժանը հոկտեմբեր ամսոյ 31-ին կը յարձակի Սվազի շուկային վրայ, կը վիրաւորէ, կը սպանէ հայերը և աւարի կուտայ ասոնց ինչքը։ Այսպէս հայոց կրպակները, խանութները թալանելէ վերջը կը խուժէ հայոց տուները։ Ինչ որ կը գտնէ կը յափշտակէ։ Կիներն, հարսներն ու աղջիկներն սարսափահար ընելով չեն բաւականար, այլ մի քանի կիներ՝ ոչխարի պէս գաղանաբար կը մորթեն։ Կառավարութիւնը կոտորածն ու աւարառութիւնը արգիլելու համար իրիկուան վրայ զօրքերը կը ղրկէ շուկան, սակայն ասոնք փոխանակ խուժանն զսպելու՝ հայոց վրայ գնդակ կ՚արձակեն։ Կոտորածն ու աւարառութիւնը 2—3 օր կը շարունակուի, և որպէս զի հայերը զանազանուին միւսուլմաններէն, յոյներէն և կաթոլիկներէն, միւսուլմանները գլուխին ճերմակ ու կանանչ փաթթած կանցնին, իսկ միւս քրիստոնեայ հասարակութեանց վերաբերեալները մէյմէկ տարբերիչ նշաններ կը կրեն վրանին, և այս կերպով ասոնցմէ ոչ ոք ոչ անձի և ոչ ինչքի կորուստ չի կրեր։ Կոտորածին և աւարին մասնակցող միւսուլմաններէն իւրաքանչիւրը մարթինի հրացաններով սպառազինեալ ըլլալին ստուգուած է։ Նոյնպէս հաստատուած է, որ հայերը երբէք առիթ տուած չեն այս աղէտին. բացի այս զանազան ապացոյցներ ի յայտ կը բերեն, թէ հայերը սպանելու և ասոնց ինչքերը աւարի տալու գործը կանխաւ կազմակերպուած և տնօրինուած բան մ՚էր։ Սվազի հայոց կենաց ընչից՝ գոյքից և կալուածից կորստեան ու վնասուց որքանութեան թիւը տակաւին ճշտուած չէ։

Սվազի նահանգին Ամասիայի սանջակին քաղաքին մէջ թիւրքերէն ու չէրքէզներէն բաղկացած կարգ մը մարդեր սպառազինեալ՝ փողոցները կը շրջագայեն և կը սպառնան. հայերը մտահոգութեան կը մատնուին։ Տեղական կառավարութիւնը տեսնելով հանդերձ այս վիճակը՝ վերահաս վտանգին առաջքն առնելու որևէ տնօրէնութիւն չը ձեռնարկեր, և այդ պատճառաւ նոյեմբեր 3-ին, միջօրէի աղօթից համար մզկիթը գտնուող թիւրքերը, չէրքէզները և զինուորները մզկիթէն դուրս կելլեն և շուկային վրայ յարձակելով՝ կը պոռան՝ „գեաւուրներուն գլուխը իշխանութեանն է, ասոնց ինչքը աւարի տալը հալալ է“։ Ամբողջ ինչքերն, գոյքերը, արմտիք, ուտեստ աւարի կուտան, և այս աղէտի միջոցին այն հայերը, որք չը յաջողեցան փախչել և որք անզէն էին և ըստ ամենայնի անկարող դիմադրելու, կը սպանեն։ Թէև այս կոտորածէն փախուստ տուող և իրենց տներու մէջ կամ պրուսիացւոց և յիսուսիան կրօնաւորաց յարկաց մէջ ապաստանուող հայերը մահէն կազատուին, բայց վաճառական թէ արհեստաւոր ամեն դասակարգի հայերը վերջին ծայր աղքատութեան և թշուառութեան կը մատնուին։ Այս աղէտը տեղի ունեցած է նաև Ամասիա քաղաքին շրջակայ գիւղօրէից մէջ և յառաջ բերած անձի և ինչքի կորուստը շատ ծանր է. ճիշտ որքանութիւնը տակաւին պէտք եղած կերպով հասկցուած չէ։

Սվազի նահանգի Ամասիա սանջակին պատկանող Մերզիֆուն գաղայի և ասոր յարակից գիւղերու հայոց վիճակը վտանգի ենթարկուած ըլլալով՝ հոն զինուորներ կը ղրկուին և հայոց պահպանութեան մասին ապահովիչ յայտարարութիւններ կը լինին։ Սակայն հոկտեմբեր ամսոյ 3-ին սպառազինեալ միւսուլմաններ մզկիթներէն և զինուորները զօրանոցներէն կը խուժեն շուկային վրայ և որպէսզի հայերը փախչելու միջոց չունենան, ճանապարհները կը կտրեն և կը սկսին աւար և կոտորած։ Կոտորածը և աւարառութիւնը կը տևէ մինչև երեկոյեան ժամը 11½ և աւարի չտուած հայ ու կրպակ չի մնար։ Փողոցները հայ սպանեալ դիակներով և վիրաւորեալներով կը լցուի, նամանաւանդ միւսուլմանաց թաղին մօտերը գտնուած ամբողջ տուները աւարի կը տրուին։ Այդ ամենէն յետոյ միայն երևան կուգան գայմագամն ու զինուորական հաղարապետը իրենց հետ ունենալով տասնական զինուոր և միսիոնարաց ու Ցիսուսեան կրօնաւորաց յարկերն պաշտպանութեան ու ապահովութեան տակ կառնուն։ Այս յարձակման և կոտորածին զոհ գացողներուն թիւն հազարն կանցնի, իսկ ընչից և վնասուց քանակութիւնը ճշտել անհնար եղած է։

Սվազի նահանգի Շապըն-Գարահիսար քաղաքին ու շրջակայ 18 հայաբնակ գիւղերու, նոյնպէս Կիւրին, Սիվրիսար և Տիվրիկ գաղաներու և ասոնց գիւղերուն մէջ սպառազինեալ թիւրքեր, քիւրդեր և չէրքէզներ կը յարձակին հայոց վրայ, կը կողոպտեն, աւարի կուտան ասոնց ինչքերն, գոյքերը և անասունները ու կայրեն տուները։ Շապըն-Գարահիսարի Թամզարա գիւղին երկու քահանաները կը սպանեն. Բիւրուք գիւղի ժողովուրդը իր կեանքը փրկելու համար՝ եկեղեցւոյ մէջ փակուած կը մնայ, սակայն չարագործք քարիւղով կը վառեն եկեղեցին և՝ ապաստանեալք հրոյ ճարակ կը լինին։ Այսպէս Գարահիսար, Սուշէհրի, Տիվրիկ, Կիւրին, Թամզարա, Բինկեան, Զմարա, Թաղէ-Իւրտ, Բիւրուք, Քէսմէ և ասոնց յարակից 50—60 հայաբնակ գիւղեր բոլորովին կը կործանուին և կը ոչնչանան։ Ցաւի սիրտ կը տեսնուի որ չարագործները արգիլելու, նաճելու պաշտօն ունեցող զինուորներն ու ժանդարմները մասնակցած են այս կոտորածին ու աւարառութեան։

Տարաբախտաբար ցայժմ անկարելի եղած է ճշտել, թէ որքան է թիւը մեռածներու և սպանուածներու, ինչպէս նաև քանակը յափշտակուած ընչից, գոյից և անասնոց։ Կառավարական պաշտօնեաներ ամեն կերպ կ՚արգիլեն այդ տեղեկութիւնները ժողվելուն։

(Վերջը միւս անգամ)

ԹԵՐԹՕՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ա.

Որպէս Քու՛րմը սրբազան՝ արփինլուսայ հայրենիքի Յոյսի՛ն դարևոր
Դու կանգնած ես հսկայօրէն մեր ճակատագիրներո՛ւ քառուղիին վրայ.
Քեզ ողջունելով՝ առջևէդ կ'անցնին զունդերը Ուխտանուէրներո՛ւն
Ու երգելով կ'երթան մեռնելու հո՛ն, ուր քու Կա՛մքը կը սահմանէ...

Արևը իր Բեհեզնե՛րը կը փռէ երկաթէ Դահլիդ շուրջը,
Ու մայր գիշերը իր Վրաններուն տակ Բանակնե՛րդ կը պատսպարէ.
Մրրիկները Քայլերո՛ւդ ճամբայ կը բանան Առապարնե՛րն աւլելով,
Իսկ շանթերը Յաղթանակնե՛րդ կը քանդակեն Ապառաժներո՛ւ ճակատներուն...
Բազէները Երգե՛րդ կը կռնչեն Ամպերու վրայ,
Ու արծիւները Տատրակներո՛ւ պէս Ուսերո՛ւդ կը թառին,
Վագրերն ու յովազները Յարգա՛նքի կը կենան երբ Վաշտե՛րդ կանցնին.
Ու նժոյգները Սանձե՛րը կը կրծեն Արշաւանքներո՛ւդ մասնակցելու համար...

Դրօշակներուդ տակ Մահը՛ քաղցրութիւնն ունի Ծնունդի՛,
Ու հին Մեռելնե՛րը հողի խորերէն Զինուորներո՛ւդ կը նախանձին.
Իսկ ամէ՛ն Պատանի՛ երկու Երա՛զ ունի այս աշխարհին մէջ՝
Նախ Անո՛ւնդ հպարտ, և ապա գովեստի տող մը Պատմութեա՛նդ մէջ...

Չի դու Վէմն ես անկեան հայրենի ազատութեան Խորանի՛ն,
Զոր մեծ Քարկոփնե՛րը տաշեցին դարերու անկործան Մարմարներէ՛ն,
Ու Մայր Երկի՛րը իր ազնիւ արեան Երանգներո՛վ խորհրդանշանած՝
Քեզ կանգնեցուց բռնութեան Պարիսպներո՛ւ հանդիման՝ ապառնիի Սէմի՛ն վրայ,
Որպէս Երդո՛ւմը մաքառումի ու որպէս Առհաւատչեա՛ն իր վերհարսնութեան...

Դու Ակո՛ւնքն ես անսպառ, ուրկէ մեր Կեանքը կ'առուակէ,
Ու Խրախճա՛նքը մեր տուներուն, ուր Յուսահատութի՛ւնը կ'արտասուէ...
Դու Պատա՛նքն ես մեր մեռելներուն ու Նշխա՛րը անոնց բերանին,
Ու Աւազա՛նը մեր նորածիններուն ու Միւռո՛նը անոնց ճակատին,
Դու Սո՛ւրբն ես նորանշան և Ուխտատեղի՛ն հալածեալներուն,
Ու Զա՛նգը վերածնութեան և Ռահվիրա՛ն փառքի պողոտաներուն,
Դու Ե՛րգն ես մեր լեռներուն ու Արձագա՛նքը որբ ծործորներուն,
Ու Մռո՛ւնչը մեր ամպրոպներուն ու կուրացնող Շանթե՛րը անոնց,
Դու Խառնարա՛նն ես վերաբռնկած մեր նախնի Հերոսութեա՛նց,
Ու սպառազէն Հա՛յրը ազգին ու կուռ Կա՛մքը անոր...

Ու Քեզ դէմ է որ այսօր կը թոթովեն շնականօրէն
Անո՛նք, որ կը Խնդայի՛ն, երբ Դու զաւակներդ կ'Ողբայի՛ր,
Ու անուշահոտ Իւղերո՛վ կ'օծուէին, երբ Դու գլխուդ Մոխի՛ր կը ցանէիր.
Անո՛նք, որ կը Շուայտանայի՛ն, երբ բիւրեր հողը կը ճանկռտէի՛ն,
Ու կը Պճնուէի՛ն ինքնագոհ, երբ Որբե՛րը վաճառքի էին հանուած,
Անո՛նք, որ Մտրա՛կը կը համբուրէին, երբ Դուն Դաշոյնդ էիր քաշած,
Անո՛նք, որ Սարսափի՛ օրերուն մէջ Քեզմէ՛ հայրաբար պաշտպանուեցան,
Ու անո՛նք, որ Եղբայրութի՛ւն կը քարոզեն վատութիւննի՛ն պատանքելու համար,
. . . .

Քե՛զ դէմ, երբ Պատմուճա՛նդ դեռ կարմիր է այսօրի Ընդհարումներէ՛ն,
Ու Սո՛ւրդ դեռ մերկ է և Շրթունքնե՛րդ դեռ կը պատգամեն,
Քե՛զ դէմ, երբ ճակա՛տդ դեռ մթնած է ու Կոպե՛րդ ծանրացած,
Սակայն Բազո՛ւկդ կը բարձրանայ թշնամու մահուան նոր Ծարաւո՛վ...
Քե՛զ դէմ, երբ Զօրութի՛ւնդ տիրականօրէն պատնէշած է Բարբարոսութի՛ւնը
Ու անվերջ Յաղթանակնե՛րդ կը շեփորեն պայքարի Կիրճերէ՛ն...
Քե՛զ դէմ, երբ ժողովո՛ւրդը արդարութեանդ Դատաստա՛նը կը պաղատի,
Ու Երգե՛րդ աղօթքի տեղ կը թրթռան իր Շրթունքներո՛ւն վրայ.
Քե՛զ դէմ, երբ Ա՛զգը արծակեցիր դատապարտութեան անարգ Սիւնէ՛ն,
Ու անոր Դահիճնե՛րը սահմռկեցուցիր դիւցազնական ճիգերո՛վդ...
Քե՛զ դէմ, երբ մեր ազատ Իրականութի՛ւնը դարբնելու կը պատրաստուիս,
Ու վերջապէս Քե՛զ դէմ, որ հրեղէն Արգա՛նդն ես մեր Արշալոյսի՛ն...
Բայց Դո՛ւ, ո՛վ Հա՛յր, երկայնամի՛տ ես, համբերո՛ղ ես ու անհա՛ս,
Դու Արծի՛ւն ես սաւառնող, որուն օտա՛ր է բնոյթը Սողունի՛ն...
Դուն վկա՛յ ես մեր Արիւնի՛ն, որ դեռ կը թափի Մոխիրներո՛ւն վրայ,
Ու կը տեսնես մեր յուսահատութեան Կարաւաննե՛րը Գիշերներո՛ւ ընդմէջէն
Եւ Արհաւիրքի՛ն ոռնոցը կ'առնես, որ Մայր-Հողը կը մրրկէ...
Նորանոր Թիապարտներո՛ւ շղթաներուն հեծեծանքը Ականջներո՛ւդ կը հասնի,
Ու Մրրկահաւերո՛ւն կ'ունկնդրես, որ նոր Փոթորիկնե՛րը կ'ազդարարեն...

Դու գիտես, որ Ոճիրներո՞ւն Ոճի՞րն է Սուրը վար դնել,
Եւ Ինքնասպանութի՞ւն է մոլեռա՛նդ թշնամիէն Կարեկցութի՞ւն հայցել,
Խաղաղութիւնը Քեզմո՞վ է միա՛յն, և միա՛յն Քեզմո՞վ գոյութիւնը Ազգին,
Ու ճամբա՛դ ճամբա՛ն է դիւցազնական, որով ընթացան Ազգե՛րը ազատագրուած...
Եւ վշտացած Նայուա՛ծքդ Զաւակներո՞ւդ վրայ կը յածի՝

Անո՛նք բոլո՛ր ալ շուրջդ են, Հա՛յր, գօտեպնդուա՛ծ են, աւելի՛ են քան երէկ,
Եւ փլատակուող Զայրո՛յթի պարիսպներու շրինդով Երդո՛ւմը կը կրկնեն...

Իսկ Դու հայրենի Փուշերո՞ւն վրայ երկաթէ Սրունքներո՞վդ ինչպէս Այսո՞ր, նոյնպէս և Վա՞ղը՝

Որպէս Քո՛ւրվը սրբազան արիւնլուայ հայրենիքի Յոյսի՛ն դարևոր
Կանգնա՛ծ պիտի ըլլաս անդրդուելիօրէն մի՛շտ մեր ճակատագիրներո՛ւ քառուղիին վրայ,
Քե՛զ ողջունելով՝ առջևէդ պիտի անցնին Սերունդնե՛ր ֆեդայիներուն,
Ու երգելով պիտի երթան Մեռնելո՛ւ հո՛ն, ուր քու Դա՛մքը կը սահմանէ...

ՎՏԱՐԱՆԴԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆԱՀԱՏԱԿԻԱԾՆԵՐ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Սասունի՝ 1904 յունուար—յուլիսի կռիւներում ընկածների

(Շարունակութիւն)

ՔԵՌԻ ԿՈՒՐԱՎՑԻ (ՔԻՒՐԴ ԲԱՐՍԵՂ).—50 տարեկան, միջահասակ, առոյգ կազմւածքով. հարուստ ընտանիքի զաւակ։ Հէնց փոքր հասակից ցոյց էր տալիս վերին աստիճան անհանդարտ բնաւորութիւն. 15 տարեկան հասակում իսկ նա չէր քաշւում իրենց գիւղում պատահող քրդերի հետ կռիւներ սարքելը, քրդերը՝ որոնք գալիս էին իրենց քմահաճոյքի թելադրած նեղութիւններին ենթարկելու գիւղացիներին։ Զափահաս դառնալուն պէս թողնում է տունը պանդխտում Պոլիս։ Այնտեղ մի քանի տարի ծառայութիւն անելուց և փող վաստակելուց յետոյ՝ անցնում է Բոլգարիա։ Իրեն շրջապատող միջավայրի և ընկերների շնորհիւ՝ կապւում է յեղափոխական գործին և քիչ վերջ բոլորովին նրան նուիրւում։ Ճիշտ այն ատենները, երբ Հրայր Բոլգարիայում տեսնւում էր հայաստանցի գաղթականների հետ, Բարսեղն էլ շատերի պէս նրա ամենամօտ բարեկամներից է լինում։ Զինւորագրւում է, սեփական փողով իրեն համար զէնքեր է հայթայթում ու անցնում Կովկաս՝ Երկիր վերադառնալու համար։ Բարսեղի վերջին նպատակը անմիջապէս չի յաջողւում և նա պարտաւորւած է լինում Կովկասում ապրել, դարձեալ իր սեփական աշխատանքով, մինչև վերջ յանձն չառնելով բեռ դառնալ կազմակերպութեան համար։ Որոշ ժամանակամիջոց անցնելուց յետոյ՝ Հրայրի խումբը Բասեն պէտք է մտնէր, բայց Բարսեղ այդ ատեն հիւանդ լինելու պատճառով կորցնում է վաղուց ցանկացած առիթը և մի քիչ աւելի մնում Կովկաս։ Վերջապէս ճարտարի խմբի հետ յաջողւում է Երկիր մտնել, և շուտով գնում է միանալու Սերոբ-Աղբիւրին, որ տակաւին ողջ էր և գործում էր։ Քիչ յետոյ Սերոբ պարտաւորւած լինելով զինւորներին առաժամապէս արձակելու, Բարսեղն ևս հեռանում է Սերոբից ու մտադրւում նորից Կովկաս վերադառնալ, բայց գալուց առաջ որոշում է այցելել գէթ մի անգամ իրենց տունը։ Եւ գնում է։

Իբրև գիւղում աչքի ընկնող տուն, շատ սովորական էր որ օտարականներ գային Բարսեղենց տունը, պատսպարւէին, պարենաւորւէին ճամբան շարունակելու համար։ Այն օրից երբ Բարսեղ թողել էր իր ծնողներին և պանդխտութեան դիմել, 25 երկար տարիներ էին անցել. պատանին այժմ մեծացել, չափահաս տղամարդ դարձել, դէմքով և արտաքինով միանգամայն փոխւել։ Այդ պատճառով էլ ընտանիքի անդամներից ոչ ոք չի կարողանում ճանաչել նրան, երբ նա հայրենական յարկին տակն էր գտնւում. իսկ ինքն չէ ուզում իրեն յայտնի կացուցանել։ Հետևեալ օրը ճանապարհը շարունակում է և մինչև Խնուս հասնում։ Յայտնի չէ թէ ի՛նչ պատճառով չի կարողանում այնտեղից առաջ գնալ ու նորից դառնում է տուն։

Այնտեղից Բարսեղի գործն է լինում իրենց և շրջակայ գիւղերում նոր ընկերներ ճարել և նրանց կազմակերպել. ընդունում էր Սերոբի յանձնարարութիւնները ու ճշտութեամբ կատարում։ Բայց իր յարաբերութիւնները երկար ժամանակ գաղտնի չը մնացին կառավարութիւնից, որ նրան, իբրև կասկածելի անձի, սկսեց քայլ առ քայլ հետևել։ Բարսեղ ինքզինքը ապահով չը զգալով՝ բարձրացաւ դէպի Սասուն ու նորից սկսեց զինւորական ծառայութիւնը։ Սերոբ տեսնում էր նրա ճարպիկ և անձնւէր գործունէութիւնը և առանձին վստահութիւն ունէր դէպի նա. նրան էր յանձնում շատ անգամ այնպիսի պատասխանատու գործեր, որ դժւար թէ ուրիշներ կարողանային ստանձնել։ Նա այնուհետև էլ շատ անգամ իջաւ դաշտ և այնտեղ մնաց կարճ ու երկար ժամանակով...

Սերոբի սպանւելուց յետոյ Բարսեղի գլխաւոր գործիչ-ընկերներն եղան Սարօն և Սեդրակ։ Մի անգամ Բարսեղ այդ երկուսի հետ գտնւում էր Կուրավա գիւղում։ Կառավարութիւնը մի մատնիչ հայի—հաւատորիկի Մակարի—ցուցմունքով գալիս է ձերբակալելու դրանց։ Ալայբէյը 50 ձիաւոր զինւորներով պաշարում է գիւղը. զինւորներից մէկը ջուր ուզելու համար՝ մտնում է մի տուն, ուր տեսնում է Սարօին ու Սեդրակին։ Վերջիններս փորձում են բռնել թիւրքին, որպէս զի սա չը հաղորդէ զինւորներին իրենց մասին. թիւրքը դուրս է ցատկում տնից, տղաները ետևից հրացան են կրակում ու գլորում նրան։ Հրացանի ձայնից թիւրքերը անմիջապէս պաշարում են տունը, երկու կորիճները դիրքեր բռնած՝ սկսում են կռւել։ Դժբախտաբար երկար չի տևում դիմադրութիւնը։ Սեդրակի հրացանը աւրւում է։ Սարօն դուրս է գալիս

տնից՝ աւելի յարմար դիրք բռնելու համար, աջից ու ձախից կրակելով կուում է իրեն շրջապատող զինուորների հետ ու առաջ անցնում, բայց ընկնում է Թշնամու գնդակների տարափի տակ։ Թշնամին չէր իմանում թէ Սեդրակի հրացանը փչացել է, ուստի շարունակում էր հրացանաձգութիւնը. Սեդրակ պաշտպանուելու և ազատուելու ուրիշ միջոց չունենալով՝ քանդում է իր հրացանի մասերը, փամփուշտների հետ ցրիւ է տալիս, կորնչցնում և ապա ողջ ողջ թշնամու ձեռքը չ՝ընկնելու համար՝ հանում է դաշոյնը ու իր սիրտը խրում...

Քեռին գտնուում էր մի ուրիշ տան մէջ. հրացանաձգութեան ձայներից հասկացել էր թէ բանը ինչումն էր, ուստի դուրս գալով տնից և գիւղի մի ուրիշ կողմ դիրք բռնելով՝ սկսում է գնդակ տեղալ զօրքերի վրայ. իրեն ընկերակցել էին Համագիւղացի Նազար հրացանով և Ցրօնքցի Շուշանիկ * ատրճանակով։ Թշնամիներից մէկը՝ Իւսուֆ չաւուշ, որ միւսներից աւելի խիզախ էր, յարձակուում է քեռու վրայ, բայց վայր է գլորուում սրա գնդակից։ Քեռին նկատում է քիչ վերջ, որ Սարօի և Սեդրակի կողմ հրացանաձգութիւնը դադարած է, և կարծելով թէ նրանք հեռացել, ազատուել են, ինքն էլ է քաշուում գիւղից։ Գիշերով վերադառնում է գիւղ, և այն ատեն է միայն իմանում՝, որ Սարօն ու Սեդրակ սպանուել են։

Այս միևնոյն դէպքի ժամանակ մատնուում է նաև Հրայր (Ըրմենակ), որ այնուհետև պարտաւորուած է լինում փախստական ապրել։ Քեռին սրա հետ գործով Ախլաթ է գնում, ուրկից վերադառնալիս Զուխուրա-Շամքի մէջ մի անգամ ևս կուի է բռնուում։ Այնուհետև նա ստանձնում է Խնուս գնալու և այնտեղի ժողովուրդը կազմակերպելու գործը։ Այդ ժամանակ էր, որ կառավարութիւնից կասկածների է ենթարկուում, իր դրութիւնը օրէ օր վտանգաւոր դառնում, ուստի առժամապէս բարձրանում է Սասուն։ Բայց քեռու պէս յաջողակ մի գործիչ անհրաժեշտ էր Խնուսի համար, այդ պատճառով շատ չանցած վերադարձաւ Խնուս, ուր շարունակեց կազմակերպել ժողովուրդը, զինել նրան ամէն հնարաւոր միջոցներով և օգնել փոխադրութիւններին։

Սասունում սկսեցին կռիւները։ Քեռին այդ ատեն իրենց գիւղումն էր գտնուում։ Համագիւղացիներից մի խումբ է պատրաստում և օգնութեան է գնում Սասուն։ Մասնակցում է բոլոր կռիւներին, որոնց մէջ ցոյց է տալիս մեծ քաջասրտութիւն և շրջանկատ սառնասրտութիւն։ Մասնակցում է նաև Կոփի կուին, որից յետոյ, նահանջելու ժամանակ, ջուրը անցնելիս թըրջուում է, ապա Կուռթըքի ցրտերից ծանր կերպով ծեծուում և հիւանդ վիճակի մէջ վեց ընկերների հետ նորից գնում Կուրավա։ Այդ գիւղում նա չէր կարող, ի հարկէ, երկար ժամանակ մնալ, որովհետև կառավարութիւնը աւելի քան երբևիցէ խիստ կերպով հետեւում էր՝ յեղափոխականներին ձեռք ձգելու համար։ Քեռին դուրս է գալիս գիւղից, մնտակայ գետի ափում մի գետնափոր սարքել տալիս և ընկերներով այնտեղ պահուում առժամապէս։ Ոչ ոք տեղեկութիւն չէ ունենում այդ գետնափորի մասին, բացի գիւղից պաշար փոխադրողներից։ Դժբախտաբար երկար չէ անցնում և պատահմամբ գաղտնիքը յայտնուում է։

Մի օր ընկերներից մէկը, Նազար, գետնափորից դուրս գալով, ջրի ափը իջնելու ժամանակ՝ գիւղի կողմը նկատում է կառավարական զինուորներ. չէ կարողանում երկար ուշանալ դրսում և վերադառնում է ընկերների մօտ։ Զինուորներն ևս իրենց կարգին նկատում են մենակ հեռացող Նազարին, որ տափարակութեան վրայ յանկարծ անյայտանում է նրանց աչքերից։ Այս հանգամանքը աւելի է հետաքրքրում ու կասկածանքի մէջ գցում զինուորներին, որոնք իսկոյն և եթ բռնում են Նազարի հետքը։ Մօտերքը, սեփական արտի մէջ աշխատելիս է լինում մի գիւղացի. հարցնում են նրանից, նա չէ կարողանում գոհացուցիչ պատասխան տալ, ուստի սպանում են նրան. ապա դարձեալ շարունակում են պրպտել շրջակայքը։ Գտնում են մի ցաք, վեր են բարձրացնում այն։ Գետնափորը բացուում է զինուորների առաջ, որոնք առանց ժամանակ տալու ներսիններին՝ սկսում են միահամուռ գնդակ տեղալ ներսը։ Քեռին վանդակի մէջ փակուած առիւծի կռիւ է մղում և նահատակուում բոլոր ընկերների հետ։

ԹՈՎՄԱՍ ԿՈՒՐԱՎՑԻ — Երեսուն տարեկան, ամուսնացած. գիւղի քեռթիպը։ Սահակեան շրջանի յեղափոխական կոմիտէի անդամներից էր։ Մեծ դեր է խաղացել իրանց շրջանի գիւղերը զինելու գործում։ Մի քանի անգամ ճամբորդել է Բուլանըխ և Խնուս, զէնքեր գնելու համար։ Երբ Սասունում սկսուում է կռիւը, նա պատրաստում է կամաւորների խմբեր և դաշտից Սասուն ուղարկում։ Ինքն էլ պատրաստուում է լեռ գնալ, երբ այնտեղից Քեռին (Կուրավցի) վերադառնալիս է լինում՝ ցրտահար և հիւանդ։ Մի քանի օր սրան պատսպարում է գիւղում, բայց ինքն ևս կառավարութիւնից իբրև յեղափոխական ճանաչուած լինելով, պարտաւորուում է փախստական ապրել. Քեռու և ուրիշ ընկերների հետ քաշուում, մտնում է գետեզերքում պատրաստուած գետնափորի մէջ, ուր և սպանուում է Թուրք զինուորներից։

ԽՈՒՇԻԿ ՑՐՕՆՔՑԻ — 25 տարեկան, ամուսնացած, միջահասակ, շէկ մազերով։ Նա իրենց գիւղում կազմակերպել էր խմբեր, որոնք հարկը պահանջած ժամանակ՝ պէտք է օգնութեան գնային շրջակայ գիւղերին կամ Սասուն։ Երբ յեղափոխական մարտիկ խումբը Առաքելոց վանքում պաշարուած էր, Խուշիկ 6 հոգու զինուած խմբով գնաց նրան միացաւ։ Իրանց գիւղումն էր, երբ 1899 թ-ին, Գուրգէն կուի բռնուեց Թուրք զինուորների հետ և նահատակուեց։ Սրա յիշատակը նա անմոռաց պահեց իւր սրտում և դրանով վրէժխնդրութեան զգացում էր արծարծում համագիւղացիների մէջ։ Խուշիկ սպանեց իրանց գիւղացի

---

* Շուշանիկ բոյրն է Ցրօնքցի Խուշիկի։ Շուշանիկ մեծ ոգեւորութեամբ օգնել է Գուրգէնին և իր խմբին։ Համագիւղացիներից շատերը նկատած լինելով նրա յարաբերութիւնները յեղափոխականների հետ, կառավարութեան էին մատնել։ Շուշանիկ պարտաւորուած եղաւ փախստական ապրել. մանէր գալիս գիւղերում և յատկապէս աշխատում կանանց մէջ եւս յեղափոխական մտքեր սերմանելու։ Հայրը վարժապետ է եղել, որից նա կարողացել էր սովորել գրել-կարդալ և բաւական գիտելիքներ ձեռք բերել։

մի յայտնի մատնիչ, որ զանազան մատնութիւններով 32 հրացան կառավարութեանն էր յանձնել տուել։ Յուլիսի 16-ին մասնակցում է Կուրավուի մեծ կռուին, ուր և սպանւում է։ Ընկերները յարգանքով վերցնում են նահատակի մարմինը և թաղում։

ԻՍՐՕ ՄԿՐՏՉԵԱՆ։—Մոկունքցի, 23 տարեկան, միջահասակ, ուժեղ, գեղեցկադէմ, զուարճախօս և լաւ երգիչ։ 17 տարեկան հասակում ծանօթացաւ Սերոբ-Աղբիւրի զինուորների հետ։ Հէնց այն օրից ի վեր հայդուկային կեանքը շատ գրաւեց նրան։ Նա այդ կեանքի սիրահարը դարձաւ. շատ անգամ էր լինում հայդուկների հետ և անում նրանց ամեն օգնութիւն՝ ինչ կարող էր։ Ծնողքը, նկատելով իրենց որդու հոգեկան փոփոխութիւնը, որ օր օրի վրայ աւելի էր աճում, աշխատեցին արգելել, չափ դնել. բայց Իսրօն միայն իր հոգու թելադրութեանն էր լսում, միայն իր կոչման ձայնին էր ականջ դնում, որին և շատ անգամ զոհում էր տնային պարապմունքները։

Երբ յայտնի Թիւրք Շէրիֆը, Մոկունքի մէջ, իր գործած մի լրբութեան համար սպանւեց, կառավարութիւնը գիւղից ձերբակալել տուեց գրեթէ 40 անձ։ Իսրօն, որ արդէն ճանաչւել էր իբրև համակիր յեղափոխականներին, նոյնպէս պէտք է ձերբակալւէր, եթէ շուտով չը հեռանար գիւղից։ Փախստական դառնալով՝ գնաց միանալու Անդրանիկի խմբին։ Ինչպէս ընդունուած կանոն էր՝ հայդուկային խմբերին միանալ ցանկացող բոլոր նորեկ զինուորների համար, Իսրօն ևս ամբողջ վեց ամիս խմբի հետ պէտք է ման գար առանց զէնքի, միայն զինուորների բեռները վերցնելու և հայդուկային կեանքի դժուարութիւններին վարժւելու համար։ Իսրօի համար տակաւին այդ որոշուած պայմանաժամը չէր լրացել, երբ առիթ ներկայացաւ՝ իր հայդուկի արժանաւորութիւնը ցոյց տալու։ Անդրանիկի խումբը ամրացել էր Առաքելոց վանքում։ Պէտք եղաւ Ուրուղցի Արթենին Սասունից օգնութեան կանչել։ Իսրօն երկու ընկերների հետ յաջողութեամբ դուրս է գալիս վանքից և խմբապետի հրահանգները տանում Արթենին։ Մինչև Ուրուղցու հասնելը՝ վանքը աւելի խիստ պաշարւեց. պէտք եղաւ պաշարողներին վրայ տալ։ Ընդհարման ժամանակ սպանւում է Գէլեցի Ղազարը. Իսրօն անմիջապէս հանում է սպանուածի զէնքերը, իր վրան առնում և սկսում քաջութեամբ կռուել։ Խմբի մեծ մասը յաջողում է կտրել Թիւրքերի շղթան և պաշարուածներին միանալ, իսկ փոքր մասը, որի մէջ և Իսրօն, դուրս է մնում և ետ դառնում վանքից՝ ուրիշ ուղղութեամբ։ Իսրօն վերադառնում է Մոկունք։

Վանքի կռիւը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ՝ Անդրանիկ բարձրացաւ Սասուն և այնտեղից Գէորգ-Չաուշի ու Վաղարշակի ղեկավարութեամբ մի խումբ ուղարկեց դաշտ՝ հանգանակութիւն անելու։ Իսրօն միացաւ այս խմբին և շրջան գործեց դաշտում։ Նորշէն գիւղում եղած ժամանակ խումբը պաշարւեցաւ. կռուի ժամանակ Իսրօն իր քաջութեամբ խրախուսիչ օրինակ եղաւ ընկերների համար. նա կռւում էր և միևնոյն ժամանակ երգում—„Ընկերնե՛ր, կանչում էր նա, յիշեցէ՛ք վանքի կռիւը, թշնամին արդէն չափել է մեր գնդակների ոյժը“։—Իսրօն արդէն պաշտօնապէս զինուոր էր. նա հասաւ իր վաղուցայ փափաքին։ Նա զինուորական կանոններին հետևում էր ամենաճիշտ կերպով, որով առհասարակ շատ սիրելի էր թէ ընկերզինուորներին, թէ խմբապետներին և թէ պատասխանատու մարմնին։ Ընկերների հետ վէճ ու կռիւ ունենալ—նրա ընկերասէր բնաւորութեան համար անծանօթ սովորութիւն էր։ Սասնոյ կռիւների առաջին նահատակն եղաւ Իսրօն. սպանուեցաւ Լաճըկանցիքի կռուի սկզբում և իր մահվը վրէժ արծարծեց ընկերների սրտի մէջ։

(Կը շարունակուի)

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

„Խաղաղութեան միջազգային բիւրօ“ պատուաւոր քարտուղարը, Էլի Դիւկոմմոն, որ վախճանուեց Բերնում, դեկտեմբեր 6-ին, մէկն էր այն շվեյցարացիներից, որոնք տածում են դէպի հայկական դատը բուռն և ջերմ համակրանք։ Մշտական յարաբերութեան մէջ „Դրօշակի“ խմբագրութեան հետ, խաղաղութեան ոգևորուած զինուորը՝ իր ձեռքի տակ եղած միջոցներից ոչ մէկը չէր խնայում մի նոր մղումն տալու մեր ժողովրդի արդար դատին։ Հռչակաւոր Ֆրեդերիկ Պասսի այդ առիթով գրած մի զգայուն յօդուածում Դիւկոմմոնի մահը համարում է „հասարակական սուգ“։

—

Վերջերս տեղի ունեցաւ „Բունդ“ կուսակցութեան միացումը ռուսաց սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան հետ։ Լեհական սոցիալիստական կազմակերպութեան մէջ տեղի ունեցաւ պառակտումն, որը, ինչպէս միշտ, պիտի կլանի ահագին ոյժեր, ժամանակ ու աշխատանք։

—

Հեռագիրը լուր բերեց, որ ռուսաց սոցիալիստ-յեղափոխականների կենդրոնական մարմինը՝ ձայների չնչին մեծամասնութեամբ որոշեց վերսկսել տերրօրական գործողութիւնը, գտնելով, որ ներկայ պայմաններում դա լաւագոյն միջոցն է՝ կառավարութեան դէմ կռուելու համար։

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Վասպուրականի Կենտր. Կոմիտէ՝

ԾՈՎԱԼԱՆՋԻ Ա. ԵՆԹԱԿՕՄԻՏԷՆ.—Զարթ գիւղ՝ Թորոս Լեւոնից 540 դահեկան, Երկաթ խմբից 6 չափ ցորեն, Վրէժ խմբից 15 չափ ցորեն, Բաղկացեալ խմբից 5 չափ ցորեն, Հրաչեայ խմբից 7 չափ ցորեն, Եփրատից եւ իր հայրից 19 չափ ցորեն, Ղովսից 4 չափ ցորեն, Յովրից 4 չափ ցորեն, եւ մի այծ, Բարեխօսից 2 չափ ցորեն եւ 2 այծ, Զանբեզարից 2 չափ ցորեն եւ 1 եզ, Սէքից 3 չափ ցորեն, Ծլատից 2 չափ ցորեն, Մեղմից 6 չափ, Անմեղից 4 չափ եւ 1 այծ, Պարտիզպանից 2 չափ, Շատախօսից 1 չափ, Գուշակից 2 չափ, Համազասպից 54 դահեկան, Արեւեսաւորից, Մախսատից մէկ երինջ, Զվայից մէկ կէս չափ ցորեն։ Դարեկոդի գիւղ՝ Սիրանուշէն 40 դահեկան, ընկերներէն 8 չափ ցորեն։ Ուրագ գիւղ՝ Կրակէն 2 ոչխար, Զարեհէն 2 ոչխար, Մուշեղ եւ ընկերներէն 7 ուլ, Վահրամէն 6 չափ ցորեն, Միածան խմբէն 45 եւ կէս դահեկան եւ 1 այծ, Վարդ խմբէն 26, դ. 2 այծ, 5 նուկի ձէթ, Վերջալոյս խմբէն 18 դ. 2 այծ, 2 նուկի ձէթ, 5 նուկի կանէփ, Մայր խմբէն 25 նուկի ձէթ, 5 նուկի կանէփ, Որոտան խմբէն 10 դ., 51 նուկի ձէթ, 8 երեք քառորդ նուկի կանեփ, Արեգակ խմբէն 50 դ., 10 կէս նուկի ձէթ, 2 կէս նուկ. կանեփ, 1 երինջ, Առաջամայլ խմբէն 35 դ., 7 կէս նուկի ձէթ, 1 այծ։ Մալապապա գիւղէն՝ 140 դահեկան, 1 ոչխար, 2 չափ ցոր։ Թարիզ գիւղ՝ Ազնիւ խմբէն 60 դահեկան, Նորածագ խ. 20, Բարեպաշտից 384 դ., 1 կով, 2 ոչխար, Դաւուսից 108, Ընկերներէն 6 չափ ցորեն, եւս տուգանք առնուած 6 չափ ցորեն։ Անդրանիկ

գիւղ՝ Ռէսից 4 չափ ցորեն, Տիգրիս խմբից 40 դահեկան: Պարտէզ գիւղ՝ ընկերներէն 6 կէս չափ ցորեն, 1 կէս չափ գարի: Ասորոս գիւղ՝ ընկերներէն 7 կէս չափ ցորեն: Գագաթ՝ ընկերներէն 20 դահեկան, 5 կէս չափ ցորեն, 3 կէս չափ գարի, Գաղթական գիւղէն 4 չափ ցորեն, եւ ընկերներէն 4 չափ, Քարի վրայէն (գիւղ) 145 դահեկան, 1 կէս չափ ցորեն, Հայկից 432, Առիւծ խմբէն 10, Մախսի Ջուլհակ խ. 40, Բիւրակնի ընկերներէն 121, Քարափի ընկերներէն 159, Ծովահայեացի ընկերներէն 131, Նպաստաւորի ընկերներէն 481, Սալորի ընկերներէն 118, Պարանոցի ընկերներէն 100, Սահմանի ընկերներէն 78, Գեղանիի ընկերներէն 4 կէս դահեկան:

Ատրպատականի Կեդ. Կոմիտէն՝

„ԱՒԱՐԱՅՐ" ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—1906 յունուարից մինչեւ յունիս վերջը: Հետեւեալ խմբերից՝ Վարդանեան 18 դր., Սօսէ կանանց 157. 15, Խան 68, Սերոբ-Փաշա 63, Հրայր 89, Քրիստափոր 30. 10, Տղմուտ կանանց 12. 5, Սօսէ կանանց խ. ձեռագործներու վիճակախաղի արդիւնքը 185. 3, Նոյն խ. միջոցաւ փոքրիկ Հրանդից 4, Բուժէտից եւ Նուիրատուփից 8. 10: Գումար 636. 3:

1905 նոյեմբերից մինչեւ 1906 ապրիլ „Բէնդերի" շրջանից՝ №50 հանգանակութեան թերթով՝ Լոյսից 1599 դր. 5 ս., Շաքարից 588. 55, Ծիծեռնակից 225, Թումանից 164 85, Հինգ ծաղիկից 107. 70, Անոռոշից 100, Գողթնեցւոց 85, Սարսափից 71. 50, Բազէից 20: Անդամավճարներ՝ Սարսափից 25, Թաթուլից 60, Դավրիժեցուց 30, Շանթից 20, Լեռնեցոց 20, Քնարիկ 20, Որբից 20, Տելեմաքից 20, Դարբինից 20, Հերոսուհուց 30, Ճամբորդից 25, Անապատ խմբից 27. 60: Տուգանքներ՝ Թաթուլից 8, Դարբնից 30, Թաթուլից 30: Նուէրներ՝ Հրաչէից 4, Կայծակից 15, Լոյսից 72: Ներկայացման զուտ արդիւնք 330. 50: Ընդհանուր գումար 3768 դր. 75 սան.:

Պալքանեան Կեդր. Կոմիտէ՝

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—Յուլիս, օգոստ. սեպտեմբեր ամիսներին մէջ. Արարատ ընթերցարանի հասոյթ՝ 286. 8 ֆրանք, Տիկ. Կարմիր-խաչի գանձարանէն 81, Վարազ խումբէն 33, Կայեն խ. 21, Արարատ խ. 15, Նոր Դար խ. 42, Նեմրութ խ. 23, Յեղայի խ. 30, Արամ խ. 21, Սերոբ-Աղբիւր խ. 24, Հազուլ խ. 27, Գայլ խ. 18, Տարոն խ. 30, Տրդատ խ. 15, Սեպուհ 39, Զինասէր խ. 15, Տիկնանց Արաքս խ. 16, Վահրամ 5, Սարի զաւակ 25, Արամ 10, Թորգոմ 2, Հրայր 10. Կոլոտ 5: Գումար 793. 80 ֆրանք:

ԿԱԼԱՑԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ.—Յակոբ Գրիգորեան 10 ֆրանք, Մ. Ինկօեան 5, Ս. Գեորգ 5, Ս. Սէֆէր 5, Մ. Սողոմ 5, Մ. Կար. 5, Մ. Թամուտ 5, Ս. Սէֆէր 5, Անտոն Սոլոմոն 20, Յ. Պօղոս 5, Հղլաք Սերտ. 5, Ս. Ալբօզա 6, Ս. Պետ. 5, Եղ. Առ. 5, Գ. Մելզ. 5, Խ. Պօղոս 5, Յ. Մարզ. 7, Տ. Սերոբ 5, Ղ. Դաւիթ 5, Ն. Աւետիս 10, Ան. Կիրակ. 5, Գ. Յս. 10, Հ. Սերոբ 5, Վ. Գէորգ 10, Ղ. Աւետ. 10, Ս. Տօնկ. 5, Ա. Յով. 5, Վ. Գէորգ 10, Ս. Գլօ 20, Յ. Կրպ. 5, Յ. Թորոս 2, Յ. Մելքոն 20, Պ. Վարդ 5, Ս. Հայր 5, Մ. Նազար 5, Ա. Մանուկ 5, Մ. Կարապ 20, Ս. Յովս. 5, Յ. Կոլլաչ 10, Ա. Ծղլաք 5, Կ. Մկրտ. 2, Ա. Գաբաս 5, Ա. Պաս. 5, Պ. Յար. 5, Ս. Կարապ 5, Կ. Պետ. 5, Ս. Զէրք 1, Պ. Շէրպ. 2, Թ. Կիւլէս 1, Ս. Սարգ. 1, Անտոն Ջունդ 25, Գ. Գլըն 2, Գ. Մաշ. 4, Ա. Մանուկ 3, Մ. Յով. 5, Հ. Յակոբ 25, Ս. Սերփ 3, Մ. Կիւր. 5. Յ. Նադօ 10, Փետրոյ եւ Պետրոս 10, Ի. Առաք. 6, Յ. Գող. 5: Գումար 425 ֆրանք.

Մ. Ռ.-ի Կ. Կոմիտէն՝

Մոծակ դեկտեմբերի 3 րուբլի, Ղարիբ դեկտ. 3, Հրաբուխ դեկտ. 5. Ծով դեկտ. 5. 50, Յառաջ յունուարի 9. 50, համար 11 նոյեմբերի 2.85, Կան դայլար մինչեւ յունուար 10. 60 կ., Սոփիա մինչեւ յունուար 6. Արազ սեպտ. հոկտ. 5. 80, Երաժիշտ սեպտ. հոկտ. նոյեմբեր 3. 50, Տիգրանակերտ սեպտեմբեր 3. 5, Նոր ծաղիկ օր. Օժ. սեպտեմբեր հոկտեմբեր 6, Սլակ սեպտեմբեր 2. 80, Ծով սեպտեմբեր հոկտեմբեր 30, համար 81 հին հաշիւ 27, Դով—եան դեկտեմբեր յունուար 10, Դ. Դ.-եանից դեկտ. յունուար 2, Օհան մ-եան նոյեմբեր դեկտեմբեր յունուար 15, Փարիզ նոյ. դեկտեմբեր յունուար 2, Վիդիմեան նոյեմբեր դեկտեմբեր յունուար 4, Յարիզեան նոյեմբեր դեկտեմբեր յունուար 1, Ծղալոբ Յ-են յունուար 2, 1 | 10 Արշալոյս հոկտեմբեր նոյեմբեր գեկտեմբեր 31. 50, Յակոբ յունուար 3, համար 63 օգոստոս 5, համար 62 Օժ. խմ. օգոստոս 7, Որոտում յունիս յուլիս օգոստոս 18, համար 69 սեպտեմբեր 4, շրջ. լիմ տար. օգոստոս 2.50, համար 70 սեպտեմբեր 6, համար 65 յունիս յուլիս 33, համար 61 սեպտեմբեր 4, համար 66 սեպտեմբեր 34, համար 63 օժ. սեպտեմբեր 7. 50, համար 69 սեպտեմբեր 7, համար 63 սեպտեմբեր հոկտեմբեր 10, համար 62 սեպտեմբեր 7, համար 64 հոկտեմբեր 3, համ. 63 օժ. հոկտեմբեր 7. 50, համար 34 օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր 17. 15. 25 Մ. Խ. դերձակ հոկտեմբեր նոյեմբեր 10, Աշոտ-Երկաթ դեկտեմբեր 24, Գուրգէն հոկտեմբեր նոյեմբեր 16, համար 61 օժ. սեպտեմբեր 4. 10, համար 41 Արշալոյս մինչեւ յունուար 9. 15, համար 46 մինչեւ յունուար 4. 95, Բաղդակ դեկտեմբեր 3, համար 227 Վասպուրական հոկտեմբեր նոյեմբեր 15, Լուսաւորիչ հոկտեմբեր 5, համար 223 հոկտեմբեր 11, համար 230 Գարօ. հոկտեմբեր 3. 50, համար 229 Զարտախ հոկտեմբեր 6. 20, համար 224 Մասիս դեկտեմբեր 5. 30, Օր. Նոր լոյս նոյեմբեր դեկտեմբեր 8, Կրակ նոյեմբեր դեկտեմբեր 5. 70, Տիկ. հայուհեաց դեկտեմբեր 3. 20, Օր. թաքնուած կայծ հոկտեմբեր 3. 30, Հայու-հեաց ա) նոյեմբեր դեկտեմբեր 7. 25, համար 27 Ալի փաշա օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր 7. 25, Կաքնաղբիւր օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր 7. 50, Վիշապ օգոստոս սեպտեմբ. հոկտեմբեր 6. 75, Արծիւ օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր 6· 75, Աղասին եւ Խանառ օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր 6. 25, Դժոխք օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր 6. 25, Շաքրվերտի օգոստոս սեպտեմբեր հոկտեմբեր 8. 50, Ռումբ դեկտեմբեր 6. 50, համար 67 նոյեմբեր դեկտեմբեր 8, Թումանի տոնաց նոյեմբեր դեկտեմբեր 25, Թուման նոյեմբեր դեկտեմբեր յունուար 15, Ազնիւ հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր 7, Ազատամիտ նոյեմբեր 4, Հրաբուխ հոկտեմբեր նոյեմբեր 9. 5, Տիկ. Նինէ յունուար 10, համար 121 հոկտեմբեր 10, համար 206 խանմիրտան հոկտեմբեր 6. 25, համար 207 հոկտեմբեր 12. 75, համար 208՝ 3. 50, Ճարպիկ հոկտեմբեր նոյեմբեր 8. 10, Ոսկի օժ. համար 126 դեկտեմբեր 3, համար 173 օժ. սեպտեմբեր նոկտեմբեր 5, համար 174 Տղմուտ հոկտեմբեր 5. 50, համար 175 սեպտ. հոկտեմբեր 10, համար 176 հոկտեմբեր 1. 80, համար 177 սեպտեմբեր հոկտեմբեր 3, համար 178 սեպտեմբեր հոկտեմբ 7, համար 179 հոկտեմ. 4, համար 181 հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր 20. 70, համար 183 հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր 23. 20, համար 184 նոյեմբեր դեկտեմ. 17. 50, համար 185 հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր 13. 75, համար 187 հոկտեմբեր նոյեմբեր դեկտեմբեր 10, Ս. Մեր դեկտեմբեր 5, Ազգաս-տիկ. բ) մինչեւ նոր տարի 8, համար 81 Արշալոյս նոյեմբեր դեկտեմբեր 18, համար 76 նոյեմբեր դեկտեմբեր 12, Հովիւ նոյեմբեր դեկտեմբեր 4, Շէն նոյեմբեր դեկտեմբեր 8: Նուէրներ տացուել են նոյն ամսուն: Ար. Աս-եան 3 րուբլի, Անման 12, Սուրէն 1, Սաքար 6, Դ. խուտ 8, Հայկ Խ. 2, Ղարիբ Մ. 3, Ստ. Արզ. 2, Սար 5, Ջաշիտ 10, Սարգիս 5:

ԱԶԴ

ՄԻԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ — ալլէգորի — հատը 1 ֆր.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ (ֆրանս. ծանօթութեամբ) — 50 ս.

Սերոբի,	*Թորգոմի,*	*Պետօի,*
Սերոբի և որդոց,	*Խանի,*	*Կարօի,*
Հրայրի,	*Քրիստափորի,*	*Բաբկէնի:*
Վահանի,	*Կայծակի,*	

Հատը 50 սանտիմ, իսկ սէրին (13 հատը) 5 ֆր.

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

«Հայկական ազատամարտը», «Ֆինլանդիա — Կովկաս» (ալլէգորի) և հետեւեալ յեղափոխական հերոսների պատկերներով.

Վազգէնի,	*Սերոբի և որդոց,*	*Կայծակի,*
Սերոբի,	*Հրայրի,*	*Պետօի,*
Պետօի,	*Վահանի,*	*Երկաթի,*
Դուրգէնի,	*Բաբկէնի,*	*Խանի,*
Արաբօի,	*Շանէնի,*	*Թորգոմի,*
Կարօի,	*Քրիստափորի,*	*Թաթուլի:*

Սէրին (20 հատը) 1 ֆր.

Դիմել՝ «Դրօշակի» խմբագրութեան, Ժընեւ: